ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՃԱՌԱՆՑԻ

ԵԱՀ-ԽՍՄԱՅԷԼԻ

ՀԵՔԵԱԹԸ

ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ

ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԵՐԷՆԻՑ

Աշխատասիրեց

ԱՇԸԴ ՋԻՒԱՆԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Տ. Մ. Ռոտֆելանցի

1901

24h.

894.35+34

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՑԻ

ԾԱՀ-ԻՍՄԱՅԷԼԻ

ՀԵՔԵԱԹԸ

ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԵՐԷՆԻՑ

Աշխատասիրեց
ԱՇԸՂ ՔԻՒԱՆԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Erwand Ter-Minassiantz
Lic. theol., Dr. phil

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1901

Дозволено цензурою, Тифлисъ, 19 Апрѣля 1901 г.

11- 18006 ա

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԻ ՀԵՔԵԱԹԸ.

Հին հեքեաթաբանները հետևեալ կերպով են ասանդում Շահ-Իսմայէլի և Դիլիզար խանումի պատմութիւնը։

Պարսկաստանի և Հնդկաստանի մէջ տեղում կայ մի երկիր որ ասւում է Աւղանիստան։ Այս երկրի Ղանդահար մայրաքաղաքում հին ժամանակներում նստում էր Աղուան թագաւորներից Ասլան անունով թագաւորը։ Այս թագաւորի կայք ու կարողութիւնը, ոսկին ու արծաթը այնքան շատ էր որ, եթէ ծովը լցնելու լինէիր, կը ցամաքէր։ Այս հարստութեան մէջ Ասլան թագաւորը դարձեալ երջանիկ չէր, որովհետև ոչ մի ժառանգ չունէր։

Մի որ թագաւորը կանուխ վեր կենալով՝ առաւօտեան սովորական աղօթքը կատարելուց յետոյ՝ նստեց իւր փափուկ բազմոցի վերայ։ Այդ միջոցին, երբ թագուհին հայելին ձեռն առած իւր թագաւոր ամուսնու դիմացը կանգնած էր, թագաւորը սրտից մի խոր ախ քաշեց և սկսեց գլուխը շարժել։ Թագուհին այս բանը տեսնելով, ասաց.—«Ո՜հ, մեծափառ Տէր իմ, այդ ինչ է նշանակում, ինչ պակասութիւն ունինք, որ դու հոգս ես անում»։ Թագաւորը կրկին հոգոց հանելով ասաց։—«Իրաւ է, որ մենք թէպէտ մի պակասութիւն չունինք, բայց ես այս աշխարհում մի զաւակ չունեցայ, որ մահից յետոյ կարողանար իմ գահը ժառանգել, ահա, այս բանն է, որ միտքս ընկած ժամանակ ախ եմ քաշում»։ Թագուհին նորից դառնալով իւր ամուսնուն ասաց. «Իրաւ է որ մարդս աշխարհում ցաւ է ունենում, բայց ցաւին էլ դեղ է

գտնում։ Մի օր քաղաքից դուրս ել, ճանապարհորդութիւն արա՛, կարելի է մի հմուտ բժիշկ հանդիպի և քո ցաւին կարողանայ ճար գտնել»։ Թագաւորը այս մխիթարական խօսքերը լսելով, հրամայեց իսկոյն կանչել իւր վեզիրին. վեզիրը իւր տիրոջ հրամանը լսելուն պէս անմիջապէս շտապեց պալատ։ Եօթն անգամ գետին խոնարհուելով համբուրեց հողը և բարև բռնելով կանգնեց թագաւորի առջև։ Թագաւորն ասաց.—«գնա շուտով երկու ձեռք դերվիշի շորեր գնիր և արի պալատ». վեզիրը առանց ժամանակ կորցնելու իջաւ փողոց երկու ձեռք շորերը վերցրեց և շտապեց պալատ։ Թագաւորն ասաց վեզիրին։—Այսօր գնալու ենք ծպտեալ կերպով քաղաքից դուրս ճանապարհորդելու. տեսնենք թէ շրջանի հայելին մեզ ինչ պատկեր ցոյց կուտայ»։ Սրանք ծպտեալ շորերով դուրս եկան պալատից և ընկան ճանապարհ։ Երեք ժամ շարունակ մի կողմ գնալուց յետոյ քաղաքից դուրս մի աղբիւրի պատահեցին։ Թագաւորն ասաց վեզիրին.—«արի այս աղբիւրի ջրով մեր ձեռքերը և երեսները լուանանք, աղօթենք և մի փոքր նախաճաշից յետոյ շարունակենք մեր ճանապարհը. յիշեալ աղբիւրից լուացուելուց և նախաճաշելուց յետոյ երկուսով ծնկների վերայ չոքած սովորական աղօթքը կատարած ժամանակ, յանկարծ մի դերվիշ ելաւ նրանց առաջ, բոլորովին ծերունի և սպիտակահեր։ Թագաւորը տեսնելով սրան ասաց—«ով դերվիշ, դու այս կողմերը ինչ ես մանգալիս»։ Դերվիշը պատասխանեց.—թագաւորն ապրած կենայ, մենք ճանապարհորդ ենք, շարունակ ման ենք գալիս այս տեղերը». թագաւորը զարմանալով ասաց։ «Դու ինչ գիտես իմ թագաւոր լինելս»։ Դերվիշը պատասխանեց—«ես ծերունի նուաստս կեանքս ճանապարհորդութեան մէջ եմ անցկացրել և իմ գլխից հազար ու մի դէպքեր են անցել. քանի՞ անգամ գտել ու կորցրել եմ։ Քո թագաւոր լինելդ և ընկերիդ վեզիր լինելը եթէ չը գիտենամ ամօթ չէ՞ իմ դերվիշութեանս»։ Այդ ժամանակ թագաւորն ասաց նրան—«ով

դերվիշ, դու որ իմ թագաւոր և ընկերիս վեզիր լինելը հասկացար, իմ ցաւիս դեղ էլ կարող ես անել». դերվիշն ասաց թագաւորին—«ցաւ տուողը դեղ էլ կարող է տալ, ես մի նուաստ արարած եմ»։ Այդ խօսքերի վերայ թագաւորն ասաց, ո՛հ, պատկառելի հայրիկ, այն բոպէից, որ դու իմ աչքիս երևեցար, ես իմ սրտումս ուրախութիւն զգացի»։ Դերվիշը իւր պարկից հանելով մի կարմիր խնձոր՝ ասաց.—«Այս խնձորը կ'տանիս տուն, երեկոյեան քնելու ժամանակը կ'կտրես, կէսը դու կուտես, կէսը թագուհին, իսկ կպէճները կտաք ձեր ախոռի մի մատակ ձիուն, որ երբէք չէ պտղել և սպիտակ նժոյգն էլ բաց կըթողնէք. ինն ամիս ինն ժամ և ինն բոպէ լրանալուց յետոյ Աստուծով թագուհին մի արու զաւակ կըծնի և մատակ ձին էլ մի քուռակ. բայց մինչև իմ պալատ գալս անուն չէք դնիլ, ոչ տղային և ոչ քուռակին»։ Այսպիսի խօսքերով թագաւորն և դերվիշը իրար հետ պայման արին։ Թագաւորը ձեռքը գրպանը տարաւ կամենալով վարձատրել իւր բարերարին, բայց մին էլ տեսաւ, որ դերվիշը անյայտացել է։

Թագաւորն այլ ևս աւելորդ հաշուելով շարունակել իւր ճանապարհորդութիւնը իւր վեզիրի հետ՝ ուղղակի վերադարձաւ պալատ։ Երեկոյեան երրորդ ժամու աղօթքը կատարելուց յետոյ, թագաւորը խնձորը կպճելով կէս արաւ, կէսը ինքը կերաւ, միւս կէսն էլ տուեց թագուհուն։ Ախոռապետին կանչելով ասաց։—«Այս խնձորի կպէճները մեր մատակ ձիուն կտաս ուտելու և սպիտակ նժոյգն էլ բաց կը թողնես»։ Մի ժամից յետոյ թագաւորն ու թագուհին փափուկ պատրաստուած անկողնի մէջ ննջեցին։

Անցաւ որոշեալ ժամանակամիջոցը, ինն ամսից աւելի անցնելով տհա մի օր թագուհին ծնեց մի գեղեցիկ արու զաւակ։ Մատակ ձին էլ մի արու քուռակ ընծայեց նորածին

գահաժառանգին։ Ասլան թագաւորի ուրախութեանը չափ չը կար. այդ օրուանից նա հրաման արձակեց բոլոր իւր երկրի մէջ գտնուող բանդարկեալներին ազատել, խեղճերին սփոփեց, հիւանդներին խնամեց և այլն։

Թագաւորի որդին խնամւում էր, ինչպէս պէտքն էր, մի տարի, երկու տարի, մինչև ութ տարեկան դարձաւ, ըսկսեց պալատի մէջ գտնուող վեզիրների երեխայոց հետ խաղալ։ Տղայքը սրան սկսեցին «անանուն իշխան» կանչել։ Մէկ օր թագաւորի որդին իւր անանուն լինելու համար զայրանալով, գնաց մօրն ասաց —«ինչու համար ինձ անուն չէք դրել»։ Մայրն ասաց —«որդիս, թագաւոր հայրդ գիտէ, գնա՛ նրա հետ խօսիր։ Իշխանը այդտեղից ուղղակի հօր մօտ գնաց և յայտնեց նրան իւր ցանկութիւնը։ Թագաւորը պատասխանեց—«որդիս, քո գոյութեանդ պատճառը մի դերվիշ է, մինչև նա այստեղ չըգայ, ես չեմ կարող քեզ անուն դնել, որովհետև նրա ցանկութեան համեմատ խօսք եմ տուել։ Այս խօսակցութեան ներկայ եղող իշխանները գլուխ տալով ասացին—«թագաւորն ապրած կենայ, այդ քո ասած դերվիշը, այսօր այստեղ է, վաղը ո՞վ գիտէ որտեղ կլինի. մէկ դերվիշի համար մեր իշխանը խոմ առանց անուն մնալու չէ և ով գիտէ թէ քանի՞ ժամանակ յետոյ նա կըհասնի այստեղ»։ Թագաւորը սրանց խօսքը յարգելով բռնեց որդու ձեռքը և ժողովի մէջ տեղ բերելով, բոլոր պալատականների հետ սկսեցին անուան համար մտածել։ Բայց թագաւորն յանկարծ լիշելով իւր խոստումը ասաց. —«մինչև դերվիշը չգայ, ես չեմ կարող իշխանին անուն տալ»։ Հրամայեց որ մի լաւ վարժապետ բերեն որդու կրթութեան համար. և յանձնեն նրան. հրամանը կատարուեց անմիջապէս. բերին մի լաւ վարժապետ և ներկայացրին թագաւորին։

Թագաւորն ասաց—«ով վարժապետ, իմ որդին քեզ եմ յանձնում, որ կրթես և ուսում տաս»։ Վարժապետը պատասխանեց։—« Ձերդ մեծութեան հրամանը անդառնալի է, սակայն իշխանի համար, պալատից ոչ հեռու մի առանձին սենեակ պէտք է շինել տաք, առաստաղը և պատերը ամբողջապէս հատ ապակուց, որոնցից արևը չկարողանայ ներս թափանցել իր լոյսը, այնտեղ իշխանը կարող է ամբողջապէս նուիրուել իւր դասերին, բոլորովին հեռու մնալով իւր ընկերներից և խանգարող միջոցներից։ Թագաւորը հրամայեց վարժապետի պատուէրին համեմատ մի առանձնացած տեղում մի սենեակ շինել տալ առաստաղը և պատերը ապակուց և ներսը գեղեցիկ զարդարուած։ Կարճ ժամանակից գործը լմնցաւ և պատանի իշխանը յանձնուեց Դանիէլ վարժապետին մեծ հանդէսով երգերով ու աղօթքներով։ Այդ օրից սկսած վարժապետն սկսեց իւր բարձր աշակերտին դաստիարակել և դասեր տալը։ Շարունակելով մի տարի, երկու տարի, մինչև տասն և հինգ տարեկան դառնալը գահաժառանգ իշխանը մնաց այդտեղ և Դանիէլ վարժապետից բաւականին բան սովորեց։

Վարժապետը պատուիրել էր պալատի խոհարարներին իշխանին ճաշ բերելիս նայեն, որ մսեղէն կերակուրների մէջ ոսկոռ չլինի. մէկ օր դուռ մի ասիլ նորին բարձրութեանը կերակուր բերելիս խոհարարները անզգուշաբար մէջը մի ոսկոռ են թողել։ Ճաշի ժամանակ իշխանը երբ կերակուրի մէջ ոսկոռը տեսաւ, բարկութիւնից վերցրեց և խփեց պատին, ոսկոռը իւր մեծութեամբ պատը ծակելով դուրս ընկաւ, ճաշուայ պայծառ արևը յանկարծ այդ կոտրուածքից ներս մտաւ։ Ուսանող իշխանը արևի շողքը յատակի վրայ տեսնելով ճաշը թողեց և սկսեց արևի հետ խաղալ։ Երկար ժամանակ արևի հետ մենամարտելով, սաստիկ յոգնեց և արիւն քրտնքի մէջ ընկղմելով նստաւ քիչ հանգստանալու, որ կրկին վեր կենայ և նոր ոյժով շարունակի իւր մենամարտը արևի հետ։ Քիչ յետոյ վարժապետը ներս մտաւ, տեսաւ որ իւր սանիկը մենամարտում է արևի հետ, նրան այդ դրութեան մէջ տեսնելով Դանիէլ վարժապետը քիչ

մնաց խելքը գլխից թռցնէր։ Բացականչելով ասաց—«Ձերդ բարձրութիւն, կռուելու համար ուրիշ բան չը գտար, որ արևի հետ ես պատերազմում։ Իշխանը կարծես ձանձրացած լինելով իւր երկար ժամանակի միայնակութեամբ ասաց իւր ուսուցչին.—«Ի սէր Աստուծոյ, վարժապետ, ինձ այստեղից դուրս հանիր»։ Վարժապետը սենեակից դուրս գալով փողոցի դրան առաջ մի աթոռ դնելով իշխանին տարաւ դուրս և հրաւիրեց նստել։ Պատանին երկար միջոց փակուած մնալուց յետոյ, երբ իրան ազատ օդի մէջ տեսաւ աչքերը այս ու այն կողմն ուղղելով նայում էր զարմացմամբ։ Ահա մէկ էլ տեսաւ որ մի կորիւ՝ ոպիտակ ձիաւոր է գալիս, աջ ձեռքում բազէն բռնած և բարակները յետևը գցած, նժոյգ ձին խաղացնելով ուրախ ու զուարթ վերադառնում է որսից։ Արդեօք այս ինչ բան է, ինքն իրան մեծ զարմանքով ասում էր պատանին. երբ այդպէս ապշած դրութեան մէջ աչքերը չէր հեռացնում գնացող ձիաւորից, վարժապետը մօտենալով ասաց, իշխանն ապրած կենայ, հրամայեցէք տուն վերադառնանք. պատանին պատասխանեց, շատ լաւ կգնանք, բայց ես էլ հօրիցս այդպիսի ձի, բազէ և բարակներ կուզեմ»։ Վարժապետն ասաց. «Շատ լաւ, տէր իմ, հրամայեցէք դառնանք տուն, ես այդ մասին կը խօսիմ թագաւորի հետ. նրանք վերադարձան դարձեալ նոյն սենեակը։ Թողնելով իշխանին այնտեղ Դանիէլ վարժապետը դուրս եկաւ այդ տեղից և անմիջապէս բարձրացաւ պալատ։ Ներկայանալով թագաւորին մանրամասնաբար պատմեց նրան նոյն օրուայ պատահած դէպքը։ Թագաւորը հաւանութիւն տալով վարժապետի խօսքերին, հրամայեց վեզիրին պալատ կանչել իւր մեծամեծներին և իշխաններին։ Երբ բոլոր հանդիսականները պալատումն էին թագաւորն ասաց—«իմ որդին այլ ևս չի ուզում կարդալ, բաւական է, ասում է, ինչ որ սովորեցի. այժմ նա որսի գնալ է ցանկանում, մտածեցէք, սորա հետ էլ իշխանին մի անուն դնենք». բոլոր մեծամեծներն

թագաւորի խօսքը լսելուն պէս, միմեանց հետ խորհրդակցելով իշխանի անուան մասին էին մտածում, մէկ էլ յանկարծ դերվիշը ներս մտաւ. բոլոր ներկայ եղողները ոտքի կանգնեցին և խոնարհ կերպով բարևեցին։ Դերվիշը մէջ տեղ կանգնած ասաց թագաւորին—«քո որդու անունը Շահ-Իսմայէլ թող լինի, իսկ քուռակի անունը Ղամար (լուսնիկ). այս անունները տալուց յետոյ անյայտացաւ։ Թագաւորը դերվիշին պարգև տալու համար շատ որոնել տուեց. բայց չկարողացաւ գտնել նրան։ Այնուհետև թագաւորը հրամայեց իրայիններին որ գնան տասն և հինգ-քսան իշխանաղն երիտասարդներ բերեն պալատ Շահ-Իսմայէլի հետ որսի գնալու համար։ Հրամանը կատարուեցաւ։ Կարճ ժամանակում պալատ հաւաքուեցան քսանի չափ ընտիր և Շահ-Իսմայէլին յարմար երիտասարդներ։ Սրանք այս գիշեր մեծ իշխանի հետ խորհուրդ կազմեցին և հետևեալ առաւօտը մեծ շքով զինուած ու սարքուած Շահ-Իսմայէլին մէջ տեղ առած քաղաքից դուրս եկան որսի գնալու։

Ղանդահարից արդէն բաւականաչափ հեռացել էին։ Շահ-Իսմայէլը իրան շատ ուրախ էր զգում խաւարից ու փակուած կեանքից ազատուած լինելով օրուայ, քաղցր եղանակը, ջինջ ու մաքուր երկինքը, ընդարձակ դաշտը իւր զանազան տեսակ հոտաւէտ ու գոյնզգոյն ծաղիկներով, առուակներով ու գետերով գրաւել էին նրա ուշքն ու միտքը և երջանիկ դրութեան էին հասցրել։ Գեղեցիկ անտառներում, հովիտներում ու լեռներում համարեա մի քսան օր ման գալուց յետոյ, մի օր բոլոր ընկերներով եկան մի սառն աղբիւրի մօտ։ Շահ-Իսմայէլը իր չորս կողմը նայելով ընկերներին ասաց.—«Սիրելի եղբայրներ, յոյս Աստուած առաւօտը ես այդ դիմացի սարը կը բարձրանամ. դուք էլ մի ուրիշ կողմ գնացէք. այդպէս ասելով նրանք եկան դարձեալ իրանց իջևանը։ Երեկոյեան ընթրելուց յետոյ քնեցին և առաւօ-

տեան վեր կենալով եկան նախընթաց օրուայ խօսակցութեան տեղը՝ աղբիւրի մօտ։

Շահ-Իսմայէլը այդ գիշեր սիրոյ աստուածուհի Աստղիկի ձեռամբ մի բաժակ էր ընդունել։ Սրանք խորհուրդ արին, որ ով էլ որ կողմ գնալու լինի, կրկին վերադառնան գան հաւաքուին նոյն տառն աղբիւրի մօտ։ Ցիշեալ պայմանից յետոյ նրանցից իւրաքանչիւրը ցրուեց մի կողմ։ Շահ-Իսմայէլն էլ իւր ձին հեծնելով սկսեց ասպանդակել և բարձրանալ դիմացի սարի գլուխը։ Երբ արդէն բարձրացել էր սարի գագաթը, միւս ստորոտում, կանաչաւէտ հովտում նրա աչքին ընկաւ մի ամարանոց հազարաւոր վրաններով, որի մօտից անցնող մի մեծ գետի ափի վերայ արածում էր մի եղնիկ։ Շահ-Իսմայէլը իսկոյն իւր բարակը բաց թողեց, եղնիկը իւր բոլոր ուժով փախչելով մտաւ մի գեղեցիկ կանաչ վրանի մէջ։ Շահ-Իսմայէլը իւր ձին քշած ժամանակ տեսաւ, որ մի գեղեցիկ աղջիկ այդ վրանից դուրս եկաւ, աղջիկը նոյնպէս իւր աչքերը ուղղելով այն կողմ տեսաւ որ մի գեղեցիկ երիտասարդ նժոյգ ձիու վրայ նստած վրանի դրանը կանգնած է։ Շահ-Իսմայէլի պատկերը տեսնելով՝ աղջիկն իսկոյն սիրահարուեց. սա էլ աղջկայ հրաշալի դէմքն ու աննման գեղեցկութիւնը տեսնելով, ուշաթափուեց և ձիու վրայից գլորուեց գետին։ Այդ վրանից քիչ վերև մի պառաւ կար, աղջիկը դիմելով նրան ասաց.—«Սիրելի մայրիկ, մեր վրանի առաջ մի գեղեցիկ երիտասարդ գալով ուշաթափուեց վայր ընկաւ. աղաչում եմ, մայրիկ, արի ինձ օգնիր, այդ տղային ուշքի բերելով նստեցնենք ձիու վրայ և ճանապարհ ձգենք իւր գործին, թէ չէ հիմայ հայրս, մայրս, եղբայրներս տեսնելով այս բանը, մեղքը ինձ վրայ կը բարդեն»։ Թէև աղջիկը պառաւին այս խօսքերը ասում էր, բայց իր հանդերձները սիրոյ կրակից արդէն բռնկուել էին, որովհետև անցեալ գիշերը երազում տեսել էր այդ երիտասարդի պատկերը։ Աղջիկը բոլորովին չէր ուզում իւր աչքերը Շահ-Իսմա-

յէլի երեսից հեռացնել։ Այդ ժամանակ պառաւը տեսնելով, որ աղջիկը շարունակ տղայի վրայ է նայում, դառնալով ասաց. «շուտով գնա ոսկէ թասով սառը ջուր բեր և շաղ տալով նրա երեսին՝ քո ձեռքերով շփիր երիտասարդի դէմքը, անկարելի է որ երբ քո գեղեցիկ ձեռքերը շփուեց նա ուշքի չգայ։ Մատաղահաս աղջիկը չգիտեցաւ, թէ ինչպէս շուտով կատարեց պառաւի բոլոր հրամանը, երբ տեսաւ որ անծանօթ երիտասարդը հետզհետէ ուշքի գալով՝ (նստեց) վեր կացաւ տեղից։ Ինչպէս որ Փղշտացի զինուորը Եղիսէի մարմնին հպուելով կենդանացաւ, այնպէս էլ մանկամարդ օրիորդի ձեռքի շփումը ազդեց Շահ-Իսմայէլի վրայ։ Իշխանը խելքը գլուխը հաւաքելով սկսեց ապուշի պէս իւր չորս կողմը նայել։ Շահ-Իսմայէլի ճանապարհորդական փոքրիկ սազը ուսից վեր առնելով՝ տեսնենք ինչ է երգում, և աղջիկը նրան ինչ է պատասխանում։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Եղնիկը տեսնելն էր միակ իմ ցաւս,
Ցանկարծ տեսայ քո երեսիդ փայլակը,
Սիրոյ ծովի մէջ ընկաւ իմ նաւս,
Սրտումս կ'վառի անշէջ կրակը։

ԳԻՒԼԻԶԱՐԸ

Շատ որսորդներ պտոյտ կգան այս սարում,
Դու բազէն կաքաւին վեր վարէ գնա՛,
Ինչո՞ւ ես ման գալիս մթին խաւարում,
Աչքերդ բաց, լսին յարմարի գնա՛։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Նմանդ չի ճարուիլ ունքերդ աղեղնակ,
Սպանում են ինձի, չեն տալ ժամանակ,

Փայլում է երեսդ ինչպէս արեգակ,
Ճակատիդ վրայ է նստել լուսնեակը։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Սոխակի նման է քս լեզուդ ճարտար,
Խօսքեր ունիս փափուկ սրտիս օգտակար,
Ծոցիս վարդերը բացուել են քեզ համար,
Քաղելու մէկ միջոց հնարէ գնա։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Քու կարմիր թշերդ խնձոր երկնային,
Երբ նայում եմ կեանք են տալիս ինձ կրկին.
Կենսատու դրախտ է քու ծոցիդ այգին,
Բուրում են քաղցր անուշ վարդը, մեխակը։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Ապրի քեզի նման երիտասարդը,
Ո՜հ, իմ սրտի սիրած քաջ տղամարդը,
Թէ ուզում ես քաղել պարտիզի վարդը,
Պարտիզպանի իղձը կատարէ գնա։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Դու ես ով ոսկի վարդ մտքիս հայլին,
Սիրտ կը խոցէ թերթիչներդ զմելին,
Թէ որ տէրը օգնէ Շահ-Իսմայէլին,
Մէկ օր կը կատարէ սրտի փափագը։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Դու ես քաջերի գլուխը, կատարը,
Երբէք չի խանգարուի աղեղիդ լարը,
Գլխիդ մատաղ լինի այս Գիւլիզարը,
Ոտքերդ մի կոբիլ արի ու գնա։

Երգեցողութիւնը վերջացնելուց յետոյ Շահ-Իսմայէլը իւր մատից հանելով ադամանդից թանկագին մատանին, նուիրեց Գիւլիզարին ի նշան սիրոյ. աղջիկն էլ փոխադարձ նուիրեց իւր մարգարտազարդ գեղեցիկ սանդրը։ Շահ-Իսմայէլը նստաւ իւր ձիու վրայ և աղջկայ դիմաց կանգնած իրանց բաժանման առթիւ այս տողերը երգեցին։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Տրտում, տխուր նայող, սիրուն
Դժուար է շատ բաժանուելը,
Մարդու սրտին, մարդու հոգուն,
Ազգում է վատ բաժանուելը։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Չէի գիտել ես քեզ առաջ,
Գնա՛ ով քաջ, ես քո՛ւկդ եմ,
Լեր միամիտ, ազնիւ իմ քաջ,
Գնա՛, ով քաջ, ես քո՛ւկդ եմ։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Իմ աւանդս դու սուրը պահէ,
Սիրահարիդ սիրտը շահէ,
Մարդու համար երկրորդ մահ է՝
Սիրուց հաստատ բաժանուելը։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Միայն ողջ լինի քու կեանքը,
Պէտք չէ աշխարհի ապրանքը,
Թող կատարուի քո բաղձանքը,
Գնա՛ կտրի՛չ, ես քո՛ւկդ եմ։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Շահ-Իսմայէլն եմ ես ահա,
Սիրուն անուանդ ինձ ասա,
Սիրահարին վնաս կուտայ,
Խեղճ, յուսահատ բաժանուելը։

ԳԻՒԼԻԶԱՐԸ

Գիւլիզարն եմ, դու ընկերս,
Մտքիդ մէջ պահիր պատկերս,
Ճշմարիտ սուրբ են խօսքերս,
Գնա, ով քաջ, ես քուկդ եմ։

Երբ սրանք երգում էին, մեզ ծանօթ պառաւը մօտ գալով, ասաց Շահ-Իսմայէլին—«աչքի լոյս, այսպիսի բան չի լինի. դուք չայլամ թռչունի պէս իրար էք խառնուել, աչքիք ձեզ մի խրատ տամ, այնպէս վարուեցէք։ Վաղը աղջկայ հայրը արօտատեղ խնդրելու համար թագաւոր հօրդ մօտ պիտի գայ, դու էլ այնտեղ պատրաստ գտնուիր այս ամենը յայտնելու նրան. քո հայրդ էլ ուղղակի աղջկայ հօրը կը յայտնի այդ բանը և գործը յաջող կերպարանք կստանայ և Գիւլիզարը կը յանձնուի քեզ։ Շահ-Իսմայէլը շտապով թռաւ ձիու վրայ և պառաւ կնոջ պատուէրի համաձայն որպէս գրաւական Գիւլիզարի երկու այտերից համբուրելով և պառաւին էլ մնաս բարև ու շնորհակալութիւն ասելով, դարձեալ նստելով ձիու վրայ ընկաւ ճանապարհ։

Այդ անսպասելի դէպքի տպաւորութեան տակ ուրախ ուրախ ձին քշեց և բարձրացաւ սարը շուտով որոշեալ տեղը հասնելու, երբ արդէն բաւականին մօտեցել էր ընկերներին, տեսաւ որ նրանցից ամեն մէկը իր արած որսերը ձեռքում բռնած սպասում էին իւր վերադարձին։ Երբ իշխանը բոլորովին մօտեցաւ և բարև տուեց, նրանք զարմացան, երբ տեսան որ Շահ-Իսմայէլի ձեռքը ոչ մի որս չէ երևում.

«Իշխան, մթթէ այսքան երկար ժամանակ մի բան էլ չը յաջողուեց ձեզ որսալ. Շահ-Իսմայէլն որպէս պատասխան այս երգն ասաց։

Իբրև պատերազմի գինուոր,
Տեսէք, ինչ բանից հեռացայ.
Պայման արի օրինաւոր,
Մեզրաբերանից հեռացայ։

Ես մի կարծիքի մէջ ընկայ,
Խանութ բացի ապրանք առայ,
Ես էլ չգիտեմ ուր հասայ,
Բեհեզարանից հեռացայ։

Ուրախացայ և խնդացի,
Աշխարհում սէր կայ զգացի,
Մի գիշեր էլ հետը մնացի.
Այսօր նրանից հեռացայ։

Ինքը բարձր նոճահասակ,
Յաւերժահարսն էր կամ հրեշտակ,
Շահ-Իսմայէլն իբրև տատրակ,
Ես վարդարանից հեռացայ։

Շահ-Իսմայէլը երգն աւարտելուց յետոյ բոլորը միասին ձիերը հեծնելով ու խաղացնելով ողջ ու առողջ դարձան քաղաք. գիշերը անցկացնելով հետևեալ առաւօտը ընկերները հաւաքուեցին Շահ-Իսմայէլի մօտ հարցրին—«իշխան, այսօր էլ չէս հրամայում գնալ, կամ որ կողմ ենք գնալու. Շահ-Իսմայէլը սրանց հարցին պատասխանեց—«Եղբարք, ես այսուհետև այստեղից ոչ մի կողմ գնալու չեմ և իմ գաղտնիքս բացի Աստծուց ոչ ոք չէ կարող իմանալ»։ Որսի գնացող ընկերները ցրուեցին ամենը իրան գործին, Շահ-Իսմայէլը մնաց պալատում և համարեա դուրս չէր գալիս իւր

սենեակից. նա սկսեց օրօտօրէ թառամել և նիհարանալ։ Ծնողները կարծում էին թէ իրանց միաճիւ զաւակը մի մեծ պատահարի կամ ցաւի է հանդիպել, որովհետև առաջուայ ուրախութիւն և կայտառութիւնը չէին տեսնում նրա վրայ։ Ամուսինները խորհուրդ արին մի հմուտ բժշկի յանձնել Շահ-Իսմայէլին որ գուցէ կարողանար մի ճար անել։ Շահ-Իսմայէլի մօտ ընկերներից մինը գործից տեղեկանալով, մտաւ պալատ և ներկայանալով թագաւորին և թագուհուն ասաց—«Ձեր բարձրապատիւ որդին Շահ-Իսմայէլը բժշկի վերաբերեալ ոչ մի ցաւ չունի. իսկապէս նրա ցաւը սիրահարութիւնն է. թագաւորը հրամայեց իւր մարդկանց.—«գնացէք իմ որդու ցանկութիւնն իմացէք. ում աղջիկն որ կուզէ իսկոյն առնիմ տամ իրան»։ Սրանք գալով Շահ-Իսմայէլի սենեակը՝ հօր հրամանը յայտնեցին նրան. նա ասաց, «ով բարեկամներ, լաւ լսեցէք, որ ես այս երկրում ոչ մի աղջկայ վրայ սիրահարուած չեմ, դուք իմ հօր հարցին այդպէս կը պատասխանէք»։

Շահ-Իսմայէլը հետզհետէ մտածելով հացից և ջրից անգամ սկսեց կորուիլ, հայրը այս մասին լսելով ինքն իրան ասում էր, այս ինչ է նշանակում։—«Ես երկրի տէրը, իշխողը լինիմ, իմ միակ որդին այսպէս կարօտութեան մէջ մաշուի» և չկարողանալով իրան զսպել սկսեց տխրել և լաց լինել։ Մի օր Շահ-Իսմայէլի նոյն ընկերը դարձեալ ներկայանալով թագաւորին ասաց—«Մեծափառ Տէր, իշխանի հետ մեր որսի գնացած ժամանակը Սև լեռան ներքևից մի ճանապարհ բռնելով և մեզանից ոչ մէկին հետը չվերցնելով նա բաւական հեռացաւ և երբ վերադարձանք քաղաք՝ մենք հետևեալ օրը նրան ասացինք թէ իշխան, այսօր որ կողմն ես հրամայում գնալ. նա ասաց թէ այսուհետև այլ ևս ոչ մի կողմ չենք գնալու և այս էլ աւելացրեց, թէ «իմ գաղտնիքս միայն Աստուած գիտէ», ես էլ այս հանգամանքը քեզ յայտնելու համար վստահացայ տյստեղ գալու, գուցէ

իմ սիրելի իշխանի ցաւին մի դարման կարողանաք տալ։ Երբ որ այս բանները լսեց թագաւորը, իսկոյն մի սուրհանդակ ուղարկեց որ գնայ տեսնի թէ Սև սարի յետևում ինչեր կան և իրեն տեղեկութիւն բերի։ Սուրհանդակը հասնելով որոշեալ տեղը, տեսաւ որ բազմաթիւ վրաններ կան խփած, տեղեկացաւ նրանց մասին և ուղղակի վերադարձաւ պալատ թագաւորին ասաց.—«Տէր իմ, Սև սարի յետևը անթիւ կապոյտ վրաններ կան խփած, ուրեմն իշխանը Իւրուք բէկի աղջկայ վրայ սիրահարուած կըլինի։ Սուրհանդակը դեռ խօսքերը չէր վերջացրել, երբ Իւրուք բէգի առաջաւորը ներկայանալով թագաւորին իմաց տուեց իւր տիրոջ գալուստը։ Թագաւորը այս մարդուն հարցրեց, թէ Իւրուք բէկը հասած աղջիկ ունի։ Բէկի մարդը պատասխանեց—«այո, Տէր իմ, բէկը Գիւլիզար անունով մի աղջիկ ունի։ Թագաւորը հրամայեց Իւրուք բէկի և նրա մարդկանց համար մի կանոնաւոր իջևան պատրաստեն։ Երեք օրից յետոյ Իւրուք բէկը պալատում ճաշի հրաւիրուեց։ Ասլան թագաւորը փառաւոր ճաշ տուեց բէկին իւր բոլոր մարդկանցով. ճաշից յետոյ Արաբիայի մէկ մէկ սուրճ խմելուց և գլանակները ծխելուց յետոյ, թագաւորը խօսք բաց անելով ասաց—«բէկ, դու մի աղջիկ ունիս Աստծու կամքով, մարգարէների և մեր սուրբ հայրերի օրէնքով նրան իմ որդի Շահ-Իսմայէլին կուզեմ։ Իսկոյն բէկը պատասխանեց—«Տէր իմ, գլխուս վերայ, ես իմ աղջիկը չեմ խնայիլ իմ թագաւորից, Աստուած շնորհաւոր անէ». խմիչքները նորոգուեցին։ Մէկը միւսից շնորհակալ լինելով դատարկեցին բաժակները։ Նոյն միջոցին մարդ գնաց Շահ-Իսմայէլի մօտ և ասաց—«աչքդ լոյս, թագաւորը քեզ նշանեց Գիւլիզարի հետ. գործի եղելութիւնը մանրամասնաբար իմանալուց յետոյ Շահ-Իսմայէլը չափազանց ուրախացած իւր գեղեցիկ փոքրիկ արծաթապատ սազը ձեռքը առնելով տեսնենք ինչ է երգում։

11-18006

Այսօր շատերն ուրախացան, բերկրեցան,
Ափսոս որ հեռու է իմ աղաւնեակը,
Բոլոր մարդիկ նրա անունը կուտան,
Շատ քաղցրալեզու է իմ աղաւնեակը:

Զափազանց ուրախ է այսօր իմ հոգին,
Բազկիս զարկ-երակը խփում է ուժգին.
Զմեռած երեսը տեսնէի կրկին,
Կեանք է, կենսատու է իմ աղաւնեակը:

Ինքը իշխանուհի և պայազատ է,
Իւր ցեղի մէջ մէկ է, անհամեմատ է,
Տարին քիչ է թէպէտ, բայց խելքը շատ է,
Սաստիկ մտառու է իմ աղաւնեակը:

Ոսկեթել կերպասից հագնում է կապայ,
Նոր ծնած լուսին է տասնուհինգ-օրեայ,
Սարերում, ձորերում, ման է գալիս նա,
Սիրուն, եղջերու է իմ աղաւնեակը:

Այս երգը երգելուց յետոյ Շահ-Իսմայէլը լռեց: Այն պառաւը, որ Իւրուք բէկի ամարանոցում Շահ-Իսմայէլի և Գիւլիզարի մօտ միջնորդի դեր էր կատարում, բէկի յետևից եկել էր Ղանդահար քաղաքը: Երբ լսեց, որ բէկը իւր աղջիկը տուել է Շահ-Իսմայէլին, ուրախութիւնից նոր կեանք ստացաւ, սկսեց արագ արագ վազել դէպի ամարանոց: Երբ հասաւ բէկի վրանին, քրտնած հեւալով ներս ընկաւ ուղղակի Գիւլիզարի մօտ մօտ կանգնեցաւ: Ուրախութեան պատճառն այս էր, որ պառաւը մեծ ընծայ էր սպասում բէկի կնոջից. վերջինս, երբ պառաւին շնչասպառ և կարմրած դրութեան մէջ տեսաւ, ասաց նրան—«ինչ է պատահել քեզ». պառաւը պատասխանեց—«աչքերդ լոյս խոտթուն, բէկը Գիւլիզարին նշանեց.—Տիկնոջ հարցին, թէ ում հետ նշանեց, պառաւը պատասխանեց. «Ասլան թագաւորի

Շահ-Իսմայէլի հետ»: Տիկինը այս խօսքերը որ պառաւի բերանից լսեց սաստիկ զայրանալով ասաց - «Ես իմ աղջիկս թագաւորի որդուն չեմ տալ, բէկը ինչ իրաւունքով առանց իմ կամքիս աղջիկ է նշանում. ես բոլորովին յօժար չեմ այդ քանին»: Այս ասելով կանչեց իւր ժողովրդի մեծամեծներին և հրամայեց ժողովրդին յայտարարել, որ իսկոյն վրանները քանդեն և պատրաստուին ճանապարհ ընկնելու դէպի Հնդկաստան: Սրանք թող պատրաստուին և շարունակեն իրանց ճանապարհը, մենք ընթերցողին տանենք բէկի մօտ: Սա թագաւորից քառասուն օր ժամանակ խնդրեց, որ իւր աղջկայ օժիտի բոլոր պակասութիւնները լրացնէ այդ ժամանակամիջոցում. թագաւորը կատարեց բէկի խնդիրը և քառասուն օր ժամանակ տալով ճանապարհ ձգեց:

Իւրուք բէկը ուրախ սրտով թողնելով Ղանդահարը, շտապեց իւր ամարանոցը: Երբ բարձրացաւ Սև սարի գլուխը՝ մեծ զարմանքով տեսաւ, որ իւր բանակի տեղը այժմ ամայի է և հողմեր են փչում և ուրուականները պար են գալիս, ոչ ոք չէր մնացել այնտեղ բացի մի հին վրանից, որի մէջ բէկը պատահեց մի երկու մարդու, որոնցից իմանալով իւր մարդկանց Հնդկաստան գնալը, ինքն էլ շտապեց հասնել նրանց:

Թագաւորի պալատում էլ պատրաստութիւն էին տեսնում Շահ-Իսմայէլի համար, որ շատ ծանր էր քառասուն օրուայ անցկացնելը, ասաց ընկերներին—«եղբայրներ, ես չեմ կարող այդքան սպասել. ես կը քնեմ և մինչև քառասուն օր չը լրանայ, ոչ ոք չը վստահանայ ինձ վերկացնել». այս ասելով իսկապէս պարկեց քնելու:

Թագաւորն, ինչպէս ասացինք, եռանդով հարսանեաց պատրաստութիւնը տեսնում էր, բայց երբ քառասուն օրը մօտեցաւ և Իւրուք բէկի վրանից ոչ մի գալող գնացող չը տեսաւ, կասկածի տակ ընկնելով՝ հրամայեց իսկոյն մի սուրհանդակ ուղարկել այնտեղ մի լուր բերելու: Սուրհանդակը վերադառնալով այս խօսքերը, ասաց թագաւորին - «Տէր իմ, բացի

այնտեղ մարդ չըլինելը, բէկի վրանների տեղ դեռ մի թագաւոր խոտ է բուսել»։ Թագաւորը շատ տխրեց. այս լուրը Շահ-Իսմայէլի ականջը հասնելով, նա սաստիկ յուսահատ դրութեան մէջ ընկած լալագին դէմքով եկաւ հօր մօտ և սկսեց այս խօսքերը ասել։—

Ահա լրանում է պայմանը, ժամը,
Կարմիր ոսկէ-վարդս ինչ եղաւ, չեկաւ,
Իմ հոգուս հրճուանքը, իմ քմքիս համը,
Ոսկէտերև վարդս, ինչ եղաւ չեկաւ։

Ինքը իշխանուհի, ժողովուրդը շատ,
Ձայնը աղբիւրի պէս քաղցր և առատ.
Դրախտի մէջ ծլող բոյս է անարատ,
Ոսկէտերև վարդս ինչ եղաւ, չեկաւ։

Հագած հանդերձները կերպ կերպ զանազան,
Պիտի գովէ ինձ պէս՝ ով տեսնի նրան,
Հասակը վայելուչ, դէմքը գուրեկան,
Ոսկէտերև վարդս ինչ եղաւ չեկաւ։

Իմ մաքիս աշխարհը անապատ դարձաւ,
Կեանքիս արեգակը ամպի մէջ մտաւ,
Փշերը պատեցին, թէ ագռաւն առաւ,
Ոսկէտերև վարդս ինչ եղաւ, չեկաւ։

Երգը վերջացնելուն պէս թագաւորը հրամայեց վեզիրին կանչել, երբ վեզիրը ներկայացաւ իւր պետին, թագաւորը գործի հանգամանքը հիմնովին ծանօթացրեց նորան։ Սուրհանդակի բերած լուրն էլ հաղորդելով, վեզիրից մի օգնութիւն էր սպասում։ Վեզիրը դառնալով, թագաւորին ասաց—«Տէր իմ, ես մի առաջարկութիւն ունիմ, եթէ կ'հրամայես, խօսիմ».—«խօսիր տեսնեմ, Աստուած վերջերս բարի անէ».—«Տէր Արքայ, ասաց վեզիրը, այսօր և եթ մունետիկ

քցել կտանք քաղաքում, թէ թագաւորի որդին պիտի ամուսնանայ և ամբողջ Ղանդահարում ինչքան որ աղջիկներ կան հագուին, պատրաստուին և պալատի Ծաղկաւէտ մեծ այգում հաւաքուին»։ Թագաւորը հաւանութիւն տալով վեզիրի խօսքերին «շատ լաւ կլինի» ասաց։ Իսկոյն մունետիկները այդ բանը տարածեցին ամբողջ քաղաքում և բարձրագոյն հրամանը յայտնեցին հպատակներին։ Իրաւ որ այդ ժամանակ աղջիկների հոգս քաշելը տեսնելու համար, մարդ պէտք է Ղանդահարում գտնուէր. ամեն աղջիկ Շահ-Իսմայէլին դուր գալու համար մէկը միւսից աւելի սկսեց զուգուել ու զարդարուել. հարուստը արդէն ոչինչ չէր խնայում իւր աղջկան զարդարելու համար, քանի որ շատ էր գանձը։ Իսկ ով էլ որ հարստութիւն չունէր, տան մէջ գտնուած իրերն էր ծախում ու աղջկան շորեր ու զարդ, զարդարանք անում, որ գուցէ թագաւորի որդին իրանց աղջկան հաւնի։ Ահա մի ուրբաթ օր քաղաքի բոլոր աղջիկները վերին աստիճանի զուրս ու զարդարանքով պճնուած, հաւաքուեցին Ծաղկաւէտ այգում։ Մէկ էլ Շահ-Իսմայէլը յիշեալ պարտէզը գալով, բարձրանալով պատշգամբը նստեց. այդտեղից սկսեց դէպի պարտէզը նայել, տեսնելով որ ամբողջ Ղանդահարի մէջ ինչքան որ գեղեցիկ աղջիկներ կան, եկել հաւաքուել են պարտէզը և ճեմելով ուրախանում են։ Իսկոյն սազը ձեռքն առնելով սկսեց աղջիկների համար այս երգն ասել։

Սիրուհները խմբուել են պարտիզում,
Ոչ մէկն էլ Գիւլիզարին նման չեն,
Սրտի սիրածն է գեղեցիկ աշխարհում,
Ոչ մէկն էլ իմ սիրելուն նման չեն։

Որի հանդերձները կարմիր գեղեցիկ,
Որը փունջ է կապում քաղելով ծաղիկ,

Որը նախարարի, դենպետի աղջիկ,
Ոչ մէկն էլ իմ սիրելուս նման չեն։

Որն էլ հագել է ոսկէհուռ հալաւ,
Որն էլ գեղեցկութեան մէջն ունի համբաւ,
Որն էլ ցայտում է զերթ սիրուն կաքաւ,
Ոչ մէկն էլ իմ նազելուս նման չեն։

Որը կապոյտ է հագած, որը ծիրանի,
Որն էլ հաստատ գովելու է արժանի,
Որն էլ ծոցում նռներ ունի գովանի,
Ոչ մէկն էլ իմ սիրելուս նման չեն։

Շահ-Իսմայէլն այսօր իւրը չտեսաւ,
Բոլոր աղջիկներին հրաժեշտ տուաւ,
Ծաղկաւէտ պարտիզում դղրդիւն ընկաւ,
Ոչ մէկն էլ իմ սիրելուս նման չեն։

Երգը վերջացնելուց յետոյ Շահ-Իսմայէլը պատշգամբից հեռացաւ իւր սենեակը։ Հայրը կանչելով նրան ասաց—«զաւակս, մէկ Իւրուք բէկի աղջկայ համար ինչու ես այդպէս տխրում. դու լաւ իմացիր, որ բ'.կի աղջիկը արդէն մեր կողմերից հեռացել է իւր ծնողների հետ. քո նրան տեսածդ տեղը այժմ ոչ ոք չկայ. արի, որդիս ձեռք քաշիր այդ աղջկանից և բոլորովին մոռացիր նրան, ես նրանից աւելի գեղեցիկ աղջիկ կուզեմ քեզ համար»։ Այս խօսքերի վրայ Շահ-Իսմայէլը ոտքի կանգնելով հօր ձեռքը համբուրելով ասաց.—«ով իմ բարեխնամ հայրս, դու կարծում ես այսուհետև ես այլևս այստեղ կմնամ. իմացիր որ այդ բանը ինձանից շատ հեռու է. ես այս կողմերում ոչ մի աղջկայ հետ էլ սրտով կապուած չեմ և ամենևին միտք էլ չունիմ կապուելու, եթէ գիտենամ, որ Գիլիզարին չպիտի գտնեմ, դարձեալ վճռել եմ գնալ այստեղից, գոնէ նրա գնացած ճանապարհում կմեռնիմ։ Կրկին հայրը շատ խնդրեց, թախանձեց, շատ

խրատատու խօսքեր խօսեց, սակայն Շահ-Իսմայէլը բոլորովին չը համոզուեց։ Թագաւորը սաստիկ բարկանալով ասաց—«գնա դժողքի անդունդը, քեզի պէս որդին ինձ հարկաւոր չէ», այսպիսի դառն խօսքերով ասելով Շահ-Իսմայէլին՝ վռնտեց իւր մօտից։

Շահ-Իսմայէլը այդտեղից դուրս գալով ուղղակի մտաւ գանձարան, մի պարկ լիք ոսկի վերցրեց, այնուհետև ջոկեց նիզակ, վահան, դաշոյններ և պատերազմական այլ գործիքներ վերցնելուց յետոյ մտաւ ձիանոցը. Ղամար քուռակը դուրս քաշելով գնաց դէպի պալատ. զէնքերը կապեց, ձին թամքեց և սանձը խփելով բերանը թռաւ նստեց ձիու վրայ։ Ուզում էր գնալ, երբ Շահ-Իսմայէլի մօրը թագուհուն իմաց տուին. սա էլ իսկոյն վազեց թագաւորի մօտ ասելու, որ Շահ-Իսմայէլը գնում է Գիւլիզարի յետևից։ «Դու հզօր թագաւոր լինիս, ասաց թագուհին, և քու միաճիւ որդուդ ճարը չը կարողանաս գտնել, դա շատ անհաւատալի բան է։ Թագաւորն իսկոյն հրամայեց, որ բերդի դռները պինդ փակեն և պահապաններն էլ հեռանան դռների մօտից։ Հրամանը կատարուեց անմիջապէս։ Պարսպի երկաթէ դռները ամուր փակելով, պահապաններն անհետացան, կտրիճ Շահ-Իսմայէլը Ղամար ձիու վրայ նստած այն է առաջ շարժուեց, մայրը լսեց և իւր գլխի մազերը պոկելով, աղիողորմ լաց ու հառաչանքով Շահ-Իսմայէլի դէմը ելաւ ու ասաց.—«Որդի, ո՞ւր ես գնում, դու թագաւորի որդի լինիս, ու մի աղջկայ համար սար ու ձոր ընկնիս, ես մեռնիմ լաւ չէ»։ Խեղճ Շահ-Իսմայէլը մօր հառաչանքներին չ'դիմանալով, առաւ սաղը ձեռքը և երգեց այսպէս։

Մայր իմ օրհնէ ինձի, մի լար,
Կերել եմ սուրբ կաթդ մաքուր,
Ողբալով քեզ օգուտ չես տար,
Արտասուք մի թափեր ի զուր։

Հայրս չի գթալ ինձ վերայ,
Յանդիմանում է անխնայ,
Ես գնում եմ, մայրս կուլայ,
Օգնէ, Աստուած, համբերանք տուր։

Պէտք չէ ինձ կայքը աշխարհի,
Սրտիս մէջը ես ուխտ արի,
Մինչ չգտնեմ, չեմ դադարի,
Իմ աղաւնին ոսկեփետուր։

Ասա հօրս բարեխնամ,
Ինձ կտեսնի կրկին անգամ,
Յուսով եմ որ շուտ կը դառնամ,
Իւր գահը չի մնալ թափուր։

Շահ-Իսմայէլն ասպնջական,
Ընկաւ ճանկը օտարութեան.
Տէր իմ Աստուած, լեր օգնական,
Ինձ մի թողնիր տրտում, տխուր։

Այս երգը ասելուց վերջը դարձեալ մնաս բարով ասելով մօրը, ընկաւ ճանապարհ. երբ հասաւ պարսպին, տեսաւ որ բերդի դռները փակ են և պահապաններն էլ այնտեղ չեն, իսկոյն նժոյգ ձին մէկ երկու անգամ այս ու այն կողմ քշելով տաքացրուց, մէկ էլ մի ասպանդակ խփելով, մի լախտ որ չհասցրուց նրան, դուռը աջ ու ահեակ թրն գալով ջարդ ու փշուր եղած գլորուեց գետին։ Այդտեղից ազատուելով առաջ խաղաց և հասաւ այնտեղ, այն աղբիւրի մօտ, որ ընկերների հետ որսի գալած միջոցին հաւաքվում էին։ Շահ-Իսմայէլը իւր անցած, երջանիկ օրերը յիշեց և արտասուալի ձայնով երգեց այս տողերը։

Պարկած ննջում էի միամիտ անհոգ,
Սիրտս վառ կրակով լցուաւ, ուր գնամ,

Նազելիս ո՞րտեղ է, չըգիտէ ոչ ոք,
Թռչուն էր, ձեռքիցս թռաւ, ո՞ւր գնամ։

Հրեշտակ ասեմ, թէ յաւերժահարս,
Տեսնին ուխտ կը գնան թէ Ճաճիկ, թէ Պարս,
Ո՞ւր գտնիմ նրա պէս սիրուն ծաղկավարս,
Ազնիւ քար էր, ընկաւ կորաւ, ո՞ւր գնամ։

Շահ-Իսմայէլս այստեղ մինչև երբ մնամ,
Սոխակ եմ, առանց վարդ ինչպէս դիմանամ,
Արդեօք ո՞ւմ հարցանեմ, ո՞ւսնից իմանամ,
Կարելի է մէկին գտաւ, ո՞ւր գնամ։

Երգն աւարտեց, կրկին ինքն իրան հաւաքելով թռաւ ձիու վրայ ու հեռացաւ աղբիւրի մօտից։ Գնաց այն հովիտը, որտեղ որ բարակը բաց էր թողել եղնիկի յետևից, բէկի ամարանոցն էր այժմ այդտեղ ամայի ու անմարդաբնակ էր։ Շահ-Իսմայէլը ոչ ոքի չտեսաւ, ամարանոցն անտէր, անտիրական այրի կնոջ նման քիչ էր մնում լաց լինի. այդ տխուր տեսարանին նրա սիրտը չդիմացաւ, խոր զգացուած սաղն առաւ ձեռքը, տեսնենք ինչ է երգում։

Այստեղ ես բարակը բաց թողի, գնաց,
Եղնիկի յետևից՝ բռնելու համար,
Այն օրուանից սէրը սրտումս մնաց,
Դիշեր, ցերեկ զառանցում եմ, Գիւլիզար։

Սիրո՞ւն ամարանոց, անխօս, անկենդան,
Իմ սիրելուս մասին դու չես ասիլ բան,
Պտրում եմ, ոչ մի տեղ չեմ գտնում նրան,
Խելագարի նման ընկած սար ու քար։

Շահ-Իսմայէլի պէս դու բաղդով կուր ես,
Մինչ շէն էիր այժմ անմարդ թափուր ես,

Ամարանոց, դուն էլ տրտում, տխուր ես,
Մնացել ես անտէր ու անմխիթար։

Երբ որ երգն աւարտեց, այժմ եկաւ այն տափարակ դաշտավայրը, որտեղ Իւրուք բէկի վրաններն էին խփած։ Այժմ վրանների տեղ նրա աչքին երևեցան ուրուականներ, շրջան կազմած խաղ ու պար անելիս, քամին էլ սկսել էր փչել որքան կարող էր, այժմ վրանների տեղ մարդու հասակի խոտ բուսած տեսնելով, սազն առաւ ձեռքը, տեսնենք ինչ երգեց։

Սարեր, ձեզ պատելո՞ն ամպերը մթին,
Խօսեցէք, իմ Գիւլիզարս չտեսա՞ք,
Կանաչ խոտեր, բոյսեր ու մարգագետինք,
Խօսեցէք, իմ Գիւլիզարս չտեսա՞ք։

Շամբ՞ն գնաց արդեօք, թէ նա Հնդկաստան,
Հարցանում եմ ինձի չէք տար պատասխան,
Գետեր ու աղբիւրներ, զով անմահական,
Խօսեցէք, իմ Գիւլիզարս չտեսա՞ք։

Արդեօք Հալէպ գնաց, թէ նա Եգիպտոս,
Որոնում եմ նրան չեմ գտնում, ափսո՛ս,
Քարեր ու բլուրներ, ձոր ու դար ու փոս,
Խօսեցէք, իմ Գիւլիզարին չտեսա՞ք։

Եթերներից անցնող սիրուն թռչնակներ,
Թռչում էք երգելով լաւ եղանակներ,
Պարտէզներ ու վարդեր և մանիշակներ
Խօսեցէք, իմ Գիւլիզարիս չտեսա՞ք։

Շահ-Իսմայէլն այս խօսքերն աւարտելուց յետոյ նստեց ձիու վրայ և հեռացաւ այդտեղից։ Ընկաւ ճանապարհ, բայց ինքն էլ իսկապէս չգիտէր, թէ ուր էր գնում։ Մէկ օր, հինգ օր անցնելով մինչև մի ամիս ճանապարհ գնաց։

Ահա մի օր մի ընդարձակ դաշտ բացուեց նրա առաջը։ Դաշտի մէջ տեղում Շահ-Իսմայէլը տեսաւ մի շատ գեղեցիկ պալատանման տուն. այդ շինութեանը մօտենալով՝ նա տեսաւ որ մի փառաւոր ապարանք է. յաղճապակից գմբէթն ու պատերը արևի ճառագայթների տակ մարդու աչքերն էին խոտոնցնում։ Ուզեցաւ ներս մտնել, դուռը չգտաւ, ուստի սազը ձեռքն առնելով այս տողերը երգեց։

Ղանդահարից քեզ մօտ եկայ.
Պալա՛տ, քեզնից ճամբայ կուզեմ,
Դուռդ ո՞ր կողմն է, ինձ ասա՛,
Պալա՛տ, քեզնից ճամբա՛յ կուզեմ։

Պալա՛տ, քեզի ո՞վ է շինել,
Հիմքդ շատ սիրուն է դրել։
Քո վարպետիդ պէտք է գովել,
Պալա՛տ, քեզնից ճամբա՛յ կուզեմ։

Դուռդ չեմ գտնում որ անցնեմ,
Թևեր չունիմ, որ ես թռչիմ,
Ձար ու հնար ի՞նչպէս գտնեմ,
Պա՛լատ, քեզնից ճամբա՛յ կուզեմ։

Շահ-Իսմայէլն եմ, դուռդ բաց,
Ես չեմ պահանջում ջուր ու հաց,
Մէջդ ո՞վ կայ, ինձ տուր իմաց,
Պա՛լատ, քեզնից ճամբա՛յ կուզեմ։

Երգը պրծնելուց յետոյ դարձեալ մարդ եկաւ, չորս կողմը լաւ ուշադրութեամբ նայեց, տեսաւ որ ոչ մի անցք չունէր ներս մտնելու։ Աւելի մօտեցաւ պալատին՝ իւր բոլոր ոյժը հաւաքելով, ձեռքի լախտը բարձրացնելով՝ այնպէս ամուր զարկեց պատին, որ պալատի պարսպի մի կողմը քանդուեց։ Ներս մտաւ, ձին մի տեղ կապեց և ինքը սանդուխտ-

ները բարձրանալով տեսաւ որ ուրթը սենեակներ կան, բայց մէկ սենեակի լուսամուտի առաջ վարագոյր է քաշած։ Իսկոյն վարագոյրի ծայրը հետաքրքրութիւնից վեր վերցրած ժամանակ տեսաւ որ մի շատ գեղեցիկ, չքնաղ օրիորդ նստած՝ քարկահ է բանում, աղջկայ աչքերից արտասուքի տեղ արիւն էր կաթում։ Շահ-Իսմայէլը անմիջապէս սենեակի դռնով ներս մտնելով քաղաքավարի կերպով բարև տուեց թուրքերէն լեզուով։ Աղջիկը ամենևին ձայն չհանեց. Շահ-Իսմայէլը կարծելով թէ սա քուրդ է, ասաց. «Աւարաթախէր». «դարձեալ ոչ մի խօսք օրիորդի կողմից։ Շահ-Իսմայէլը կարծելով թէ նա Հայ է՝ «բարի լոյս» ասաց, դարձեալ լռութիւն. կարծելով թէ աղջիկը ռուս է, Շահ-Իսմայէլն ասաց «զդրավստուոյտէ». աղջիկը դարձեալ լուռ էր։ Վերջապէս վրացի կլինի ասելով Շահ-Իսմայէլն ասաց «գամառջոպա»։ Աղջիկը տեսաւ որ տղան դեռ շատ պիտի ձաւրէ, թողեց քեարկահը, իւր մետաքսանման հիւսերից մէկը դնելով գեղեցիկ կրծքի վրայ՝ որպէս սազ՝ սկսեց երգել։ Այժմ տեսնենք աղջիկը Շահ-Իսմայէլին ինչ է ասում և նա ինչ է պատասխանում։

ԱՂՋԻԿԸ

Ո՞րտեղից գուրս եկար հրեշտակի նման,
Ցաւս շատ է. կորիչ, ես ինչպէս ասեմ,
Չես կարող իմ ցաւին տալ դեղ ու դարման,
Ցաւս շատ է, կորիչ, ես ինչպէս անեմ։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Կարելի է ցաւիդ լինեմ ցաւակից,
Ասա, աղջիկ, ցաւդ ինչ է, հասկանամ,
Գաղտնի ցաւերիդ դեղ անեմ ոգելից,
Ասա, աղջիկ, ցաւդ ինչ է, հասկանամ։

ԱՂՋԻԿԸ

Եօթը եղբայր ունիմ այժմ բացակայ,

Ուղարկել եմ անգութ թշնամու վրայ,
Պատերազմի դաշտում կռվում են հիմայ,
Ցաւս այս է, կորիչ, ես ինչպէս ասեմ.

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Ես քո ցաւդ հաստատ իմանամ պէտք է,
Ձեր թշնամու վրայ ընթանամ պէտք է,
Եղբարցդ օգնելու ես ջանամ պէտք է,
Ցաւդ ինչ է, աղջիկ, ասա հասկանամ։

ԱՂՋԻԿԸ

Թէ պիտի ցոյց չտաս ուժդ, հնարդ,
Թող տուր ինձ, գնամ քու ճանապարհդ։
Քանի որ չես կապել զէնք ու սապարդ,
Ցաւս շատ է, կորիչ, ես ինչպէս ասեմ։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Նազդ շատ է, դիմանալը դժուար է,
Խօսքիդ քաղցրութիւնը մեղր է, շաքար է,
Մի կեանք ունիմ հաստատ քեզի համար է,
Ցաւդ, ինչ է, աղջիկ, ասա հասկանամ։

ԱՂՋԻԿԸ

Լսէ խօսքս, քեզ ճշմարիտն եմ ասում,
Մի ծեր մարդ կայ, ինձ նրան տալ չեն ուզում,
Եղբայրներս իմ մասին են զոհ գնում,
Ցաւս, այս է, կորիչ, ես ինչպէս ասեմ։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼԸ

Մէկն ինչ է՝ իմ դէմս, թող գայ հազարը,
Կը քաղեմ, ինչպէս որ խոտը, բանջարը,

Ամեն տեսակ ցաւիդ կգտնեմ ճարը,
Ցաւդ, ինչ է, աղջիկ, ասա՛ իմանամ։

Ա Ղ Ջ Ի Կ Ը

Ո՞ր երկրից եկար, իմ կենաց մասը,
Քանդեցիր իմ տունը, տուիր վնասը,
Գիւլփէրին թող քաշէ քու պատուհասը,
Ցաւս շատ է, կորի՛չ, ես ինչպէս ասեմ։

Շ Ա Հ - Ի Ս Մ Ա Յ Է Լ Ը

Արդեօք պիտի գտնեմ վարդ մանիշակիս,
Դառն է դրութիւնը թշուառ սոխակիս,
Շահ-Իսմայէլն եմ, չեմ հասել փափագիս,
Ցաւդ, ինչ է, աղջիկ, ասա՛, հասկանամ։

Երգը վերջացնելուց յետոյ, Գիւլփէրին դառնալով Շահ-Իսմայէլին ասաց.—Մեծապատիւ Տէր. դու հիմայ անպատճառ քաղցած կլինիս. սպասիր մի քիչ հաց բերեմ կեր. Գիւլփէրին գնաց մի կատարեալ ճաշ պատրաստեց և հրաւիրեց Շահ Իսմայէլին սեղանի վրայ։ Աղջիկը իւր թանկագին հիւրի հետ սկսեց ճաշել։ Երբ ճաշը վերջացաւ հարցրեց նրան։ —Օրիորդ, քո եղբայրները որտեղ են, ում հետ են կռվում, որ երդիդ մէջ չիշեցիր։ Գիւլփէրին պատասխանեց—«այդ դիմացի բարձր սարը տեսնում ես, որ երևում է լուսամուտից. այդ լեռան յետևում Ղարախան անունով մի ծեր մարդ կայ, նրա զօրքերի հետ են կռվում։ Յիշեալ խանը, որ համարեա ութսուն տարեկան է, բոլորովին մաշուած ու զառամեալ, ունի եօթ կորիճ որդիներ։ Եւ գիտես, իրա համար այդ ծերունին եղբայրներից ինձ ուզում էր կնութեան առնել։ Եղբայրներս իմարկէ մերժեցին ծերունու առաջարկութիւնը. նա էլ իրան վրէժը հանելու համար շատ զօրքով եկաւ ինձ փախցնելու։ Դեռ մեր տանը չմտեցած, երբ եղբայրներս

լսեցին դրանց գալը, եօթն էլ պատրաստուեցին և նրանց դէմ ելան կռուելու։ Այժմ չգիտեմ թէ ինչ հետևանք ունեցաւ. ոչ մի տեղեկութիւն չունիմ. միայն այս գիշեր մի վատ երազ տեսայ, իբր եղբայրներիս երկուսը զոհ էին գնացել այդ պատերազմի մէջ. մնացել էին հինգը, որ ամեն ջանք գործ էին դնում յաղթելու՝ խանի բազմաթիւ զօրքերին։ Շահ-Իսմայէլը տեղից վեր կացաւ և պատրաստականութիւն յայտնեց նրանց օգնութեան հասնելու։ Աղջիկը արտասուալի աչքերով ճանապարհ գցեց անծանօթ հիւրին ցոյց տալով այն սարը տանող ճանապարհը։

Շահ-Իսմայէլը Գիւլփէրից հեռանալով՝ շատ չանցած հասաւ այն սարը, բարձրացաւ լերան գլուխը, նրա միւս կողմում աչքի ընկաւ մի ահագին զօրաբանակ։ Զօրքերի դէմ հակառակ կողմում տեսաւ Գիւլփէրիի հինգ եղբայրներին։ Ուրեմն քրոջ խօսքը դուրս եկաւ. երկու եղբայրները այդ կռուում նահատակուել էին արդէն։ Շահ-Իսմայէլը ինքն իրան մտածելով ասում էր. եթէ քչւորի կողմն անցնեմ, պիտի ասեն գոռոզութիւն արաւ. եթէ շատուորի կողմը գնամ, պիտի ասեն վախեցաւ։ Լաւ է գնամ երկուսի մէջ տեղը կանգնեմ, բարև տամ, որ կողմից որ բարևս առան նրանց կողմն անցնիմ։ Այսպէս վճռելով եկաւ, ձին քշելով հասաւ, կանգնեց երկու հակառակորդների մէջ տեղը։ «Բարև ձեզ» ասաց. հինգ եղբայրները շատ սիրով Շահ-Իսմայէլի բարևն առան։ Շահ-Իսմայէլը ոգևորուած սազն առաւ և երգեց այսպէս։

Բարձր սարի գլխին բազմեցի այսօր,
Տէր իմ Աստուած, Տէր իմ, օգնութիւն արա՛,
Տկարներուն պաշտպան, ուժեղ մեծազօր։
Տէր իմ Աստուած, Տէր իմ, օգնութիւն արա։

Ստեղծեցիր մարդը, բոլոր աշխարհը,
Երկիւղիցդ կդողան սարը և քարը,
Փորձանքից ազատէ այս հինգ եղբայրը,
Տէր իմ Աստուած, Տէր իմ, օգնութիւն արա։

Ստեղծեցիր աստղեր, լուսին ու արև,
Ցերեկի և գիշերային մեծ պարգև
Մատենալով տուի Աստծու բարև,
Տէր իմ Աստուած, Տէր իմ, օգնութիւն արա։

Դէմս երևում է մի հզօր բանակ,
Տկարներուն ջնջել կուզէ համարձակ,
Կամ կյաղթեմ, կամ կլինիմ նահատակ
Տէր իմ Աստուած, Տէր իմ, օգնութիւն արա։

Շահ-Իսմայէլն այսօր եռանդի գալով
Իւր ձին ասպարէզ է մտնում խաղալով,
Արեան մէջ թաթախեմ թուրս շաղ տալով,
Տէր իմ Աստուած, Տէր իմ, օգնութիւն արա։

Երգը վերջացնելուն պէս առանց ժամանակ կորցնելու ձիուց վար թռաւ, ձիու փորքաշը եօթը տեղից պինդ ամրացնելով դարձեալ թռաւ, ձիու վրայ նստեց։ Սուրը մերկացրեց, վահանը ձախ թևն անցկացրեց ու Աստուած կանչելով այնպիսի մի յարձակում գործեց, որ թշնամու մէջ մի խառնաշփոթութիւն ընկնելով բոլոր զինուորները փախուստ տուին։ Շահ-Իսմայէլը աւելի ոգևորուելով իւր յաջողութիւնից, քշեց մտաւ նրանց մէջ և առանց աջ ու ահեակ նայելու խորտակեց գոռոզ խանի բանակը։ Զօրքերի քառորդ մասը հազիւ թէ ազատուեցաւ փախչելով, մնացած մեծ մասն Շահ-Իսմայէլը սրախողխող արաւ։ Այսպիսի մի մեծ յաջողութեան համար փառք տալով Աստծուն, Շահ-Իսմայէլը ձիուց վար թռաւ ու նստեց հանգստանալու։ Մինչ սա իւր ձիու հետ հանգստանում էր, հինգ եղբայրները մեծ զարմանքով մի կողմ կանգնած խօսում էին միմեանց հետ թէ ինչ մեծ ու անսպասելի օգնութիւն էր, որ Աստուած հասցրուց իրանց։ Այս մեծ բարութեանը երախտապարտ չը մնալու համար, որոշեցին այդ անծանօթ հերոսին հրաւիրել իրանց տուն մի լաւ պատիւ տալու։ Փոքր եղբայրը առաջ գալով Շահ-Իսմայէլին հրաւիրեց տուն։ Բոլորը միասին ճանապարհ ընկան դէպի արդէն ծանօթ տունը։ Ճանապարհին Գիւլֆէրիի հինգ եղբայրները չը գիտէին, թէ ինչպէս յայտնեն իրանց շնորհակալութիւնը։ Եթէ դու մի քիչ ուշ հասնէիր, մեր միւս երկու եղբայրների պէս մեզ էլ պիտի սպանէին այդ անիրաւները և մեր քրոջը պիտի փախցնէին։ Ճիշտ որ Աստուած հասցրեց քեզ, գոհութիւն Աստծոյ, մենք այժմ ազատ ենք։ Դեռ տանը չէին մօտեցած, երբ փոքր եղբայրը վազեց իմաց տալու քրոջը, թէ պատրաստութիւն տես, մի թանկագին երիտասարդ բերում ենք մեր տուն ճաշի։ Յանկարծ երբ տեսաւ որ իրանց տան պարսպի մի կողմը քանդուած է, սիրտը կտոր կտոր եղաւ, կարծելով թէ թշնամու զօրքերից եկել են տուն։ Սաստիկ զայրանալով սուրը քաշեց և ներս վազեց։ Տեսաւ որ քոյրը հանգիստ նստած քեարկեահ էր բանում։ Զարմանալով ասաց—ով անգութ, այս ինչ է քո արածները, մենք քեզ համար երկար ժամանակ է պատերազմում ենք, արիւն ենք թափում, քո պատուի համար երկու եղբայրներս էլ ընկան այնտեղ, դու անամօթ անզգամ, այստեղ սրտակից գտնելով քեզ համար ուրախութիւն ես անում, շուտ ասա թէ ով է քանդել այս պատը, արդեօք ով ներս մտաւ, շուտ ասա, ապա թէ ոչ, այս բոպէիս քեզ հարիւր կտոր կանեմ։ Քոյրը առանց զայրանալու հանդարտ կերպով պատասխանեց—«ինչու ես զայրանում, սիրելի եղբայր, լսիր գործի ճշմարտութիւնը, յետոյ խօսիր, մի կտրիճ սպիտակ ձիաւոր եկաւ։ Եղբայրը նոր լսեց, որ այն իրանց օգնութեան հասնող սպիտակ ձիաւորն է ու հանդարտեց. սիրտը մեղմացաւ և դառնալով քրոջը ասաց. —«Դէհ, շտապիր, մեզ համար շուտ սուրճ պատրաստիր, եղբայրներս յաջողութեամբ վերադառնում ենք, հետներն էլ մի երիտասարդ հիւր են բերում»։ Մինչև Գիւլֆէրիի սուրճ պատրաստելը Շահ-Իսմայէլը իւր ընկերների հետ հասաւ

տուն. բարձրացան վերև և բազմեցան փառաւոր գորգերի վրայ, Գիւլփէրին արծաթէ մատուցարանի վրայ չինական բիւրեղից շինուած սկահներով մի մի հատ սուրճ տուեց իւր եղբայրներին և անծանօթ երիտասարդին. սուրճը վայելելուց և մի քիչ հանգստանալուց յետոյ, յիշեալ հինգ եղբայրները մի փառաւոր ճաշ տուին Շահ-Իսմայէլին տեսակ տեսակ կերակուրներով ու քաղցրահամ խմելիքներով։ Երբ որ կերան, խմեցին, ուրախացան և արդէն հացկերոյթը վերջանալու վրայ էր, Գիւլփէրիի մեծ եղբայրը առաջարկեց Շահ-Իսմայէլին, որ իրանց փեսայ լինի իւր քրոջը առնելով։ Այդպէս էլ եղաւ. ուրախութիւնը նորոգուեց Շահ-Իսմայէլը յօժարութիւն յայտնեց Գիւլփէրիին առնելու։ Անցան մի քանի օրեր։ Շահ-Իսմայէլն ու Գիւլփէրին միմեանց հետ ուրախ օրեր էին անցկացնում, բայց սրանք ապրում էին միմեանց հետ որպէս անմեղ հրեշտակներ։ Երբ Շահ-Իսմայէլն ուզում էր Գիւլփէրիի հետ ննջել, թուրը հանում էր պատեանից և մերկացրած իրանց մէջ տեղն էր դնում։

Մի գիշեր Շահ-Իսմայէլը իւր անկողնում քաղցր քնի մէջ երազում Գիւլիզարին տեսաւ։ Գիւլիզարը սև էր հագած, արտասուալի աչքերով ներկայացաւ նրա աչքերի առաջ և կարծես այսպէս ասելիս լինէր «Շահ-Իսմայէլ, Շահ-Իսմայէլ, շուտով հասիր, որ ես ձեռքից գնում եմ»։ Այս երազից սթափուելով վերկացաւ և սրտից մի ամուր ախ քաշեց։ Կարծում էր թէ ամբողջ աշխարհը տակն ու վրայ է եղել և ինքը մնացել է տակը։ Գիւլփէրին տեսնելով Շահ-Իսմայէլի անսովոր դրութիւնը՝ ասաց «Ո՜հ Տէր իմ, մենք ինչ պակասութիւն ունինք, որ դու ախ ես քաշում ու հոգս անում, այդ բանի պատճառն ինչ է, խնդրում եմ ինձանից գաղտնիք մի պահիր»։— «Ազնիւ օրիորդ, պատասխանեց Շահ-Իսմայէլը իրաւ է, որ մենք այստեղ ոչ մի պակասութիւն չունինք, բայց բանն այն է. որ ես քեզ պէս մի հրեշտականման Գիւլիզարից եմ ջոկուել։ Մինչև ես նրան չգտնեմ, ինձանից ոչ ոքի օգուտ

չի լինի, նրա կարօտը ցեցի նման ինձ հալումաշ է անում։ Աննման Գիւլփէրի, եթէ դու նրան տեսար, ասա ինձ, գընամ գտնեմ նրան և քեզ էլ այստեղից վերցնելով միասին գնանք Ղանդահար»։ Գիւլփէրին պատասխանեց—«Տէր իմ, հաւատա, որ ես նրան բոլորովին չեմ տեսել, չեմ ճանաչում և չգիտեմ էլ թէ, որ կողմն է գնացել»։ Այս պատասխանից յետոյ Գիւլփէրին արտասուելով գնաց եղբայրների մօտ և ասաց—արի՛ք տեսէք, ձեր ընտրած փեսան գնում է»։ Անցաւ գիշերը։

Գեղեցիկ առաւօտը բացուել էր, թագուհի արևն արդէն մի նիզակաչափ հորիզոնից բարձրացել էր և լուսաւորում էր աշխարհը։ Գիւլփէրիի եղբայրները քրոջ երեկոյեան իրանց հաղորդած լուրի պատճառով, առաւօտ կանուխ մըտան Շահ-Իսմայէլի սենեակը։

Ինչպէս լսեցի, ուզում ես գնալ, յարգելի բարեկամ, բայց ո՞ւր ես ուզում գնալ և ինչ պատճառով։ Շահ-Իսմայէլը պատասխանեց—«իմ այս կողմերի գալու պատճառն իսկապէս մի սիրուհի ունէի, և նա եղաւ։ Ես եկայ ձեզանից սիրելուս մասին տեղեկութիւն հարցնելու և դուք հանդիպելով, ձեր քոյր Գիւլփէրին առաջարկեցիք ինձ։ Ես չմերժեցի. բայց քանի որ ես իմ նախկին սիրուհուն Գիւլիզարին չգտնեմ, ոչոքի չեմ կարող հաստատ խօսք տալ ու վերջնական կապուել նրա հետ։ Այդ հաստատ վճիռն իմանալով, բոլոր եղբայրներն էլ ոտքի կանգնելով ճանապարհ ձգեցին նրան ասելով.—«Գնա բարեկամ. Աստուած քեզ յաջողութիւն և բարի ճանապարհ տայ, բայց ճանապարհի վրայ մի արիւնարբու արաբ կայ, զգուշացիր, նրանից քեզ մի վնաս չհասնի. Աստծուն ենք յանձնում քեզ, մեր տէրը, գնա՛ յաջողութեամբ և մի մոռանար մեզ։ Շահ-Իսմայէլը վերադարձի վերջնական պայման անելով Գիւլփէրիի հետ համբուրուեց նրա հետ, մնաս բարով ասաց նրա եղբայրներին և ընկաւ ճանապարհ։

Երիւ քառասուն օր շարունակեց Շահ-Իսմայէլը իւր ճանապարհը։ Քառասուն և մէկերորդ օրը եկաւ վերոյիշեալ արաբի ապարանքի մօտ մի տեղ իջաւ։ Մէկ էլ գլուխը բարձրացնելով վեր նայեց որ ինչ տեսնի, մի կանաչաւէտ բլուրի վրայ մի շատ գեղեցիկ արքայավայել պալատ, այդ ապարանքի չորս կողմումն էլ վրաններ կան խփած, որոնց մօտի բազմաթիւ զօրքերը պաշտպանում էին այդ գեղեցիկ ամրոցը։

Անվախ Շահ-Իսմայէլը հետաքրքրութիւնից շարժուած ձին քշելով եկաւ վրանների մօտ կանգնեց. նրան չնկատեցին, նա շտապով մտաւ մի վրանի մէջ, տեսաւ որ այդ վրանի մէջ դրուած է մի ափսէ և երկու գաւալ ու երկու կտոր հաց էլ մօտն է դրած, իսկոյն ափսէի խուփը վերցրեց, նայեց որ միջի կերակուրը կարմիր արիւնով է եփուած։ Առանց երկիւղի Շահ-Իսմայէլը գտալի մէկը վեր առնելով սկսեց ուտել կերակրից։ Այդ ապարանքի տէրը՝ Արաբ-Իւզանկին՝ որ տեսել էր օտարականին վրան մտնելիս, երբ տեսաւ որ ամանից կերակուր է ուտում, ձայն տուեց—«ով քաջ, դրան արիւնէ ապուր են ասում, առաջ ինձ հետ փորձուիր, ապա այդ կերակուրը սկսէ ուտելը»։ Այդ խօսքերի վրայ Շահ-Իսմայէլը սաղն առաւ տեսնենք ինչ է երգում և արաբն էլ ինչ է նրան պատասխանում երգով։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼ

Սրտիս մէջ իրձ ունիմ, խեղճ սիրահարս,
Գթա՛, արա՛ք, գթա՛ մի՛ չարչարիր ինձ։
Թող տուր շարունակեմ իմ ճանապարհս,
Գթա՛, արա՛ք, գթա՛ մի՛ չարչարիր ինձ։

ԱՐԱԲԸ

Առաւօտ մի կաքաւ ուռկանս ընկաւ,
Ոտքը վնասուել է, կաղալով կերթայ։

Երկիւղիցը պառունկները պայթեցաւ,
Խեղճը արտասուելով և լալով կերթայ։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼ

Լսէ արա՛ք, ես վատութիւն չեմ ցանկալ,
Ամեն բազէ իմ թռչունս չի որսալ,
Շուտով դու կլինիս արիւնաթաւալ,
Գթա՛, արա՛ք, գթա՛ մի՛ չարչարիր ինձ։

ԱՐԱԲԸ

Որս տեսնելիս, զերթ առիւծ կ'մրմռամ,
Յաղթուած չեմ, իմ պատիւս է անթառամ,
Վարարած գետի պէս գոչեմ, կ'գոռամ,
Թռչունը իմ մօտից դողալով կերթայ։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼ

Ո՞վ դու արիւնարբու, անգութ աւազակ,
Իմ ձեռքովս պիտի լինիս շան սատակ,
Տունդ, տեղդ շուտով կանեմ աւերակ,
Քեզ ասում եմ, արա՛ք մի՛ չարչարիր ինձ։

ԱՐԱԲԸ

Շատերին քեզ նման առել եմ աւար,
Գլխից բուրգ եմ շինել, դիակից կամար,
Իմ սրիցս դու կմեռնիս չարաչար,
Աստ եկողը գլուխը տալով կերթայ։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼ

Ահա կառնեմ ձեռքս սուր ու վահանս,
Կանչում եմ սրբերին իմ օգնութեանս,
Տէրն է իմ պաշտպանս, իմ պահապանս,
Աստուած սիրես, արա՛ք մի՛ չարչարիր ինձ։

ԱՐԱԲԸ

Երեխայ ես հաւասար չես քաջազնին,
Վախիցդ փախել է գոյնդ գլխովին,
Միթէ չէիր լսել Արաբ-Իւզանկին,
Իմ մօտից ուրախը սգալով կերթայ։

Երգեցողութիւնը աւարտելուց յետոյ Շահ-Իսմայէլը մի հայեացք ձգեց արաբի վրայ, տեսաւ որ մի վիթխարի մարդ է, պռունկների մէկը գետին, միւսը երկինք։ Շահ-Իսմայէլն ասաց. «Ինչ ես անանձրև քամիով փքուած ամպի նման գոռում, գոռգոռում, արի ասպարէզ տղամարդու նման մենամարտենք, Աստուած կամ ինձ կտայ, կամ քեզ։ Արաբն այս խօսքերից շատ նեղացած, վազեց իսկոյն ախոռը իւր նժոյգ ձին դուրս քաշելով մորեխի նման մի ակնթարթում թռաւ ու թամքի վրայ նստեց. երկու հարիւր լտրանոց լախտը գիւրզ ձեռքին առնելով եկաւ կռուի ասպարէզում կանգնեց։ Շահ-Իսմայէլը երբ արաբին պատրաստուած ասպարէզ գալը տեսաւ, իսկոյն ինքն իւր տեղից վեր թռչելով իւր նժոյգի վրայ նստած գնաց նրան դիմաւորելու։ Արաբը սաստիկ գոռալով ասաց Շահ-Իսմայէլին. «արձակուիր երեխայ, ես պատրաստ եմ»։ Ո՛չ, առաջ դու արձակուիր» ասաց Շահ-Իսմայէլը, —որովհետև քո հողի մէջն ենք գտնւում. այդ ժամանակ Արաբ-Իւզանկին իւր մտքի մէջ ասում էր. այս երեխայի մէջ ինչ ոյժ պիտի լինի, որ այդպէս գոռոզանում է, ես մի հարուածով կխեղճացնեմ սրան. այսպէս ասելով իւր ձեռքի ահագին լախտը օդի մէջ եօթն անգամ պտոյտ տալով արձակեց։ Շահ-Իսմայէլը իւր լախտը դէմ բռնելով ազատուեց այդ հարուածից։ Երկու երկաթներ իրար խփուելով կայծեր առաջացրին, այնպէս ուժեղ էր արձակել արաբը։ Ձիերի դոփիւնից, փոշին գետնից բարձրանալով ծածկեց երկուսին էլ։ Այդ զօրեղ յարձակումը Շահ-Իսմայէլին թէև մի վնաս չհասցրեց, բայց մօրից ծծած կաթը խեղճ երիտասարդի քը

թից թափուեց։ Արաբն էլ տեսնելով այս, իւր մէջ ասաց, ախսոս. խեղճ տղային վախեցրինք. գալով դարձեալ կանգնեց ասպարէզի գլուխը. Շահ-Իսմայէլը ինքն իրան ժողովելով արտանց մի այնպիսի աղաղակ բարձրացրեց որ սարերն ու ձորերը արձագանք տուին։ Արաբը երբ այս ահարկու ձայնը լսեց, պռունկները պատառուեցին, վախեցաւ, և կամեցաւ փախչել։ Շահ-Իսմայէլն ասաց—«վախկոտ, թոյլ արաբ, կանգնիր, ուր ես փախչում. կաց հերթն իմն է. առածս փոխը եթէ չըդարձնեմ, մօրից ծծած կաթը թող ինձ համար օձի թոյն լինի։ Սպասիր ահա եկայ, ասելով արաբի հետ լախտ չախտի, սուր սրի տուին։ Շահ-Իսմայէլն Աստուած կանչելով այնպիսի մի լախտ հասցրեց, որ արաբի ձին վայր ընկաւ տիրոջն իր հետ վար գլորելով։ Շահ-Իսմայէլը թռաւ ձիուց և այն է ուզում էր արաբի գլուխը դաշոյնով կտրել, երբ արաբն յանկարծ երեսի դիմակը վերցրեց, Շահ-Իսմայէլը տեսաւ որ այդ արաբ ասածդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի տասնուհինգ օրեայ լուսին, մի աննման աղջիկ. բոլորովին չըսպասելով այդպիսի մի գեղեցիկ օրիորդի հետ գործ ունենալը, Շահ-Իսմայէլը նրա սպիտակ դէմքից ապշած ու զմայլած, խեղճը տուեց ու վայր ընկաւ ձիուց ուշաթափ։ Արաբն ասաց։—«Ես այժմ իմ տէրը գտայ.» հրամայեց իւր նաժիշտներին, որ սառը ջուր բերեն. ջուրը բերին և սրսկելով Շահ-Իսմայէլի երեսին, ուշքի բերին բոլորովին հիասթափուած. Շահ-Իսմայէլը թև թևի տալով Արաբ-Իւզանկու հետ սանդուխտներով բարձրացան վերևի յարկում մի շքեղ սենեակում նստեցին։

Շահ-Իսմայէլն այդ տան մէջ հինգ-վեց օր կերաւ ու քաւականին ուրախացաւ։ Մի օր սրտից այնպէս մի ախ քաշեց, որ թէ իրան և թէ արաբին շատ տխրեցրեց. իսկ արաբը դառնալով նրան հարցրեց—«ինչ է պատճառը, որ այդպէս տխուր ախ ես քաշում, ինչ ցաւ ունիս, տէր իմ, ասա՛ ինձ։ Շահ-Իսմայէլը պատասխանեց.—«իմ այստեղ գա-

լուս պատճառը մի մեծ ցաւ է և եթէ այդ ցաւը բառնամ սարերի վերայ, չեն կարող տանել։ Ես զրկուել եմ աննման և նազելի ընկերից. մինչև նրան չգտնեմ, ոչ ոքի չեմ կարող տալ իմ ձեռքը»։ Արաբը դարձեալ հարցրեց Շահ-Իսմայէլին—«իսկապէս ինչ է քու ցաւիդ պատճառը, մանրամասն կերպով պատմիր, կարող եմ քու ցաւիդ մի՞ճար անել»։ Շահ-Իսմայէլը պատասխանեց—«սիրելիս, իմ ցաւս Թիւրքմէն Իւրիւք բէկի աղջիկ Գիւլիզարն է։ Նա իմ նշանածն էր. մայրը չյօժարանալով, առաւ աղջկան փախցրեց. բայց չգիտեմ, ո՞ր կողմն է։ Ես էլ նրա յետևից ընկած որոնում եմ։ Ահա այս կողմերը գալով քեզ հանդիպեցի, եթէ մի տեղեկութիւն ունիս նրա մասին ասա գնամ». արաբն ասաց, սիրելի, եթէ այդպէս է, քեզ հետ միասին գալով կորոնենք և որտեղ որ է կգտնենք քո սիրելին։ Մի հոգի ունիմ, պատրաստ եմ քեզ համար զոհելու, այս խօսքերից յետոյ պատրաստուեցին և հետևեալ օրը ընկան ճանապարհ դէպի Հնդկաստան։ Քառասուն օր շարունակ ճանապարհորդելուց յետոյ, վերջապէս հասան Հենդ քաղաքը։ Այդ քաղաքի մէջ մտան գալով վերին թաղերում մի պառաւ կնոջ հանդիպեցան։ Մօտեցան նրան բարևեցին ու ասացին—«մայրիկ, այս գիշեր քեզ հիւր պէտք է լինինք». պառաւը «շատ լաւ, ասաց, բայց ձեր ձիերին յարմար տեղ չունիմ տեղաւորելու»։ Շահ-Իսմայէլը ձեռքը տարաւ գրպանը մի բուռ ոսկի տուեց պառաւին։ Պառաւը ոսկիքը տեսնելու պէս ասաց.—«որդիքս, այս տան տակ մի լաւ ախոռ կայ ձիերիդ յարմար։ Ձիերը ախոռում կապելով՝ հիւրերը բարձրացան վերև և մի լաւ սենեակում իջևանեցին։ Երեկոյեան ընթրիքից յետոյ պատրաստուում էին ննջելու։ Մէկ էլ յանկարծ թմբուկի և սրնգի ձայներ լսուեցին։—Այս ինչ ուրախութեան ձայներ են, հիւրերն հարցրին պառաւին—«որդիքս, մեր թագաւորը մի որդի ունի, անցեալները երբ Թիւրքմէնների Իւրիւք բէկը այստեղ եկաւ, մեր թագաւորը նրա Գիւլիզար անունով աղջիկը իւր որդուն

ուզեց։ Աղջիկը այսպէս պատասխանեց—«ես քառասուն օր՝ սուգ պիտի պահեմ, բայց քառասուն օրը լրանալուց յետոյ միայն պիտի պսակուիմ նրա հետ»։ Թագաւորի որդին չկարողանալով այդչափ երկար համբերել, ամեն երեկոյ այսպէս նուագածութիւններով է անցկացնում իւր տխուր ժամերը։ Այս երեկոյ տասն և հինգերորդ երեկոն է։ «Շահ-Իսմայէլի սրիւնը գլուխը խփեց, սկսեց արաբի երեսին նայել։ Արաբն ասաց.—«Հոգս մի անիլ, Աստուած ողորմած է, նա շատ լաւ էր կարգադրել ամեն բան»։ Ամբողջ գիշերը Շահ-Իսմայէլի քունը չառաւ, մտածմունքների մէջ լուսացրեց։ Բարի լսին երկուսն էլ վերկացան տեղերից։ Արաբը իւր գեղեցիկ հանդերձներից հագցրեց պառաւին, մի քանի ոսկի էլ ընծայեց։ Շահ-Իսմայէլն էլ Գիւլիզարից նշան վերցրած ոսկի սանդրը գրպանից հանելով տուեց պառաւին և ասաց։—«Մայրիկ, այս սանդրը պէտք է մի կերպ Գիւլիզարին հասցնես, գիտես շատ շուտով, և անհամբեր պատասխանի եմ սպասում։ Այս ասելուց յետոյ պառաւին ճանապարհ դրին։ Ծերպիկ պառաւը շատ չարչարուելուց յետոյ եկաւ վերջապէս հարսանեաց տունը գտաւ. ուզում էր սանդուխտներից վեր բարձրանալ Գիւլիզարին տեսնելու. պահապանները արգելեցին ասելով—«այ կին, ո՞վ ես դու, ինչ ես ուզում»—պառաւը պատասխանեց. «ես Թագաւորի որդու կողմից եմ գալիս, պէտք է Գիւլիզարի հինան ներս տանեմ։ Զինուորները նրան ճանապարհ տուին, պառաւը սանդուխտներից վեր բարձրացած ժամանակ հանդիպեց Գիւլիզարին։ Աղջիկը լսելով պառաւի բերանից հինայի անունը, սաստիկ բարկանալով ասաց.—«շուտ վայր ձգէ ձեռքիդ հինայի թասը և շուտով հեռացիր, եթէ չես ուզում սանդուխտներից վայր գլորուել։ Պառաւը առանց ժամանակ կորցնելու իսկոյն գրպանից հանեց Շահ-Իսմայէլի տուած սանդրը և ցոյց տուեց. երբ Գիւլիզարը իւր սանդրը տեսաւ, մօտը գտնուող աղջիկներին հրամայեց հեռանալ։ Կանչեց պառաւին հրաւիրեց նստելու և

հարց ու վորձ անելով ասաց.—«Ես քեզ վաղուց էի որոնում. ասա՛ շուտով, ո՞վ տուեց քեզ այս սանդրը. ո՞ր տեղից ես ձեռք բերել»։ Գիւլիզարի հարցին պառաւը պատասխանեց—«քո սիրահար Շահ-Իսմայէլը այս գիշեր իմ տանս հիւր էր։ «Գիւլիզարը Շահ-Իսմայէլի անունը լսելուն պէս, սաստիկ ուրախութիւնից փոթաթուելով պառաւին ասաց.—«Արի, իմ սիրելի մայրիկս, շաքարից անուշիկս և լսիր ինձ. ես այսօր պէտք է գնամ արքայական այգին զբօսնելու, մինչև երեկոյ այնտեղ կլինեմ, գնա նրան իմաց տուր, որ երեկոյեան գայ այնտեղ և ինձ գտնի. պառաւը վերադարձաւ իւր տունը և այս ուրախալի լուրը հաղորդեց Շահ-Իսմայէլին։ Արաբն ու Շահ-Իսմայէլը պառաւի բերած բարի համբաւների համար շատ ուրախացան և դարձեալ վարձատրեցին նրան առատապէս։ Անհամբեր սպասելուց յետոյ, վերջապէս հասաւ երեկոն։ Երկու ընկերները ձիերը հեծնելով ճանապարհ ընկան դէպի արքայական պարտէզը. երբ հասան այնտեղ, Գիւլիզարը և Շահ-Իսմայէլը միմեանց տեսան։ Ինչպէս գառն ու ոչխարը իրար կհանդիպեն, այնպէս էլ որանք կորօտ սրտով հանդիպեցին միմեանց և մէկ մէկու պարանոցով փաթաթուելով երկար ժամանակ չէին ուզում ջոկուիլ։ Մի քանի բոպէ լուռ մէկ մէկու երես նայելով, վերջապէս Շահ-Իսմայէլը ինքն իրան հաւաքեց, եռանդի գալով սաղն առաւ ձեռքը. տեսնենք ի՞նչ է երգում և Գիւլիզարը ի՞նչ է պատասխանում երգով։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Տեսնում եմ որ նորահարս ես դարձել դուն,
Հագել, զարդարուել ես կարմիր ու ճերմակ,
Փունջ ես կապել ծաղիկներից գոյնզգոյն,
Ինձ ընծայ ես բերել վարդ ու մանուշակ.

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Քեզնից ջոկնուելով ես չեմ խնդացել,
Քեզ մօտ է նշանս, դուն բարով եկար,
Հաւատացիր, ոչ ոքի խօսք չեմ տուել,
Իմ դեղ դարմանս, դուն բարով եկար։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Գեղանի կաքաւ ես, քայլդ սիգաճէմ,
Հասակդ վայելուչ, նայուածքդ վսեմ,
Շատ վաղուց է քաղցր ձայնդ լսել չեմ,
Խօսիր, կեանք տուր ինձի սիրելի տատրակ։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Երկար ճանապարհիդ մնաց աչքերս,
Ուրախ լուր չբերեց իմ թղթաբերս,
Իմ քաջ բարեկամս, անկեղծ ընկերս,
Մեծափառ իշխանս, դուն բարով եկար։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Շահ-Իսմայէլն այսօր սիրտը կ'բանայ,
Իւր սիրելին նրան նորից կեանք կտայ,
Գնանք շուտով՝ որ թշնամին չիմանայ,
Նա հզօր է, մեզ կ'լինի հակառակ։

ԳԻԻԼԻԶԱՐԸ

Առանց քեզ օրերս անցնում են խաւար,
Գալստեանդ կսպասէի անդադար,
Գիւլիզարը թող զոհ լինի քեզ համար,
Աներկիւղ սպասպանս, դուն բարով եկար։

Այս երգից յետոյ Շահ-Իսմայէլը արաբին աչքով արաւ Արաբ-Իւզանկու տունը Աստուած գինէ, ինքը սև, շորերը սև, նժոյգը սև, թռաւ ձիու վրայ նստաւ և այնպէս գոռա-

լով վերայ հասաւ որ Գիւլիզարի մօտ գտնուող աղջիկները կարծեցին թէ երկնքից մի հրեշտակ էր որ եկաւ։ Գիւլիզարին քաշելով գաւակը Շահ-Իսմայէլի հետ թռան անհետացան։ Սրանք գնացին շարունակ առանց հանգստանալու, վերջապէս քաղաքից շատ հեռու մի սառն աղբիւրի մօտ վեր եկան հանգստանալու։ Աղբիւրի մօտ մարգագետին կար շրջապատուած գեղեցիկ բարձրահասակ ծառերով։ Ձիերին թողին արօտի վերայ, իրանք էլ ծառերի հովանու տակ նստան։ Երկար ժամանակ միմեանց հետ սիրալիր խօսքեր փոխանակելուց յետոյ, արաբն ասաց.—«Տէր իմ, դու յոգնած կլինիս, Գիւլիզարի հետ մի քիչ քնեցէք, հանգստացէք, ես ձեզ վերայ կհսկեմ։ Թող այստեղ երկու սիրահարուած աղաւնիները ննջեն արաբի հսկողութեան տակ, մենք ընթերցողի հետ վերադառնանք Հենդ քաղաքը։ Տեսնենք այնտեղ թէ թագաւորի որդին ինչ է անում։ Երբ որ Շահ-Իսմայէլն ու արաբը Գիւլիզարին փախցրին, նրա աղախինները շնչասպառ վազեցին թագաւորի մօտ, ասացին - «Գիտենք, երկնքից էր թէ երկրից՝ երկու ձիաւորներ թռան մինը սև, միւսը սպիտակ Գիւլիզարին առան ձիու գաւակն ու փախան։ Նուտով այդ լուրը հաղորդուեց թագաւորին, սա անմիջապէս հրաման արձակեց, որ քաղաքում ինչքան որ զէնքի կարող մարդիկ կան, շտապով պատրաստուին, որ նոր հարսնացուին փախցրել են, գնան բերեն։ Հրամանը կատարուեց. թագաւորի որդին բազմաթիւ զօրքերի առաջ ընկած՝ շտապում էր գտնել իւր հարսնացուն տանող անյայտ թշնամիներին։ Մինչև սրանք արիւն քրտինք մտած առաջ էին գնում, Արաբ-Իւզանկին սառն աղբիւրի մօտ դեռ հսկում էր քնած զոյգին։ Խեղճը շատ պահպանելուց յետոյ տեսաւ, որ չեն զարթնում և արևն էլ սկսել էր թեքուել դէպի արևմուտք, ուզում էր ձէն տալ նրանց, մէկ էլ դիմացի լերան վերայ աչքին ընկաւ զօրքերի և խառնիճաղանճ մարդկանց մի ահագին բազմութիւն։ Այդ դէպքից այլայլուած մօտեցաւ, որ Շահ-Իսմայէլին և Գիւլիզարին զարթեցնէ, բայց երբ տեսաւ որ նրանք հանգիստ քնել են, չուզեցաւ խանգարել նրանց, թողեց հանգիստ ու բոլորովին անվախ սկսեց պատրաստուել։ Իւր արաբական սև նժոյգը բերեց մօտ, թռաւ նրա վրայ, տհագին լախտը ձեռին առած, քշեց թշնամու վրայ։ Մօտենալով նրան այնպիսի մի սոսկալի աղաղակ ու գոռիւն բարձրացրեց, որ սար ու ձոր թնդաց։ Ինչպէս որ քաղցած գայլը մի հօտ ոչխարի մէջ կմտնի, այնպէս էլ արաբը յանկարծ վրայ հասնելով թշնամու զօրքի վրայ, մտաւ նրանց մէջ, յոգնած զինուորներին ահից ու երկիւղից ցիր ու ցան արաւ։ Ծանր լախտը առանց աջ ու ահեակ նայելու, պատահողին խփում էր։ Այնպէս որ մի մասը կոտորուեցին, միւս մասն էլ երկիւղից փախան իրանց երկիրը հետները տանելով թագաւորի որդուն։ Արաբը գոհանալով այսպիսի մի յաջողութիւնից, անվնաս, առանց մի վէրքի, կատարեալ յաղթանակով վերադարձաւ իւր ընկերների մօտ։ Տեսաւ որ դեռ քնած են, սաղն առաւ ձեռքը և իւր գլխով անցածները սկսեց երգով պատմել նրանց։

Սև մէգով պատեցին Հնդկաց սարերը,
Զարթիր իմ սիրելիս, տես ինչքեր եղաւ,
Կարմիր գոյն ստացան գետեր, քարերը,
Զարթիր, իմ սիրելիս, տես ինչքեր եղաւ։

Հիմայ լուր կըհասնի, զօրք կուգայ կրկին,
Նրանք էլ ծարաւ են մեր արեանն անգին,
Հազար աղուէսն ինչ կանէ մէկ առիւծին,
Զարթիր, իմ սիրելիս, տես ինչքեր եղաւ։

Հիմայ սև զօրք կուգայ նոր կազմ բանակով,
Նրանք էլ կռվում են սրով նիզակով,
Ձորերը լցուեցին մարդու դիակով,
Զարթիր, իմ սիրելիս, տես ինչքեր եղաւ։

Հիմայ շուտով կուգայ քաջ Անգղիացին,
Նրանք շատ զօրեղ են ահարկու, ուժգին,
Եվ նայիր ինչ արեց Արաբ-Իզանկին,
Զարթիր, իմ նազելիս, տես ինչքա՞ր եղաւ։

Երգի ձայնից Շահ-Իսմայէլը զարթնեց. վեր կենալով ասաց.—«ո՛հ արաբ, սաստիկ քաղցած եմ, մի քիչ հաց բեր ուտենք։ Արաբը տեղից վեր կենալով ասաց—«Հրամայեցէք տէր իմ, մի քիչ վերև գնանք. այնտեղ մի քանի կաքաւ եմ խփել, տես ինչ լաւ խորոված կլինի»։ Այս խօսքերը ասելով արաբը՝ Շահ-Իսմայէլի ձեռքից բռնեց տարաւ դիակների մօտ։ Շահ-Իսմայէլը երբ տեսաւ այս բանը, սաստիկ սարսափ զգաց, որ առանց իրանց գիտենալուն այդ մեծ գործը կատարուել է։ Ուղղակի ձիերի մօտ գալով, հեծան նժոյգները և ճանապարհ ընկան։ Երկար ու բարակ գնալով, մի օր վերջապէս հասան արաբի ապարանքը։ Հինգ, տասն օր այդտեղ հանգստանալուց յետոյ, Արաբ-Իզանկին սկսեց ճանապարհի պատրաստութիւն տեսնել։ Գինը ծանր, քաշը թեթև իւր ապրանքներից վեր առնելով, երեքով կրկին ընկան ճանապարհ։ Ահա մի օր հասան Գիւլփէրիի եղբայրների բընակարանը։ Վերջիններս ողջ առողջ տեսնելով իրանց փեսային՝ երկու ուրիշ հիւրերով, մեծ պատուով ընդունեցին տան վերի յարկում։ Հիւրերը հաւաքուեցին Գիւլփէրիի սենեակը ու տեսակցուելով սրա հետ փափուկ գորգերի վրայ բազմեցին։ Մի փոքր հանգստանալուց յետոյ, տանտիրուհի Գիւլփէրին իւր քառասուն հիւսերից մէկը տաղ անելով դրեց շամամ ծծերի վրայ ու սկսեց երգով բարևել Շահ-Իսմայէլի բարի գալուստը։

Օտար երկրից գալող կարիչ,
Բարով, հազար բարով եկար,
Ոսկի բերիր, ոչ թէ արճիճ,
Անգին զմրուխտ քարով եկար։

Լացի, թափեցի արտասուք,
Մի քիչ ուրախացայ այժմուս
Մէկի տեղը բերիր երկուս,
Թանկագին աւարով եկար։

Գիւլփէրին մատաղ խնդալուդ,
Ուրախ լուր բերիր մօտալուդ,
Կսպասէի քու շուտ գալուդ,
Հազիւ երկու տարով եկար։

Երգն աւարտելուց յետոյ Գիւլփէրին Շահ-Իսմայէլի ձեռքը համբուրեց և նստելով Գիւլիզարի մօտ՝ սկսեց հարց ու բարև անել նրանց հետ։ Երեք օր էլ այդտեղ մնալով՝ Շահ-Իսմայէլը Գիւլփէրիին ասաց.—Ճանապարհի պատրաստութիւն տես, որ գնանք Ղանդահար»։ Այս լսելով Գիւլփէրին իսկոյն շտապեց եղբայրների մօտ և ասաց.—«Շուտով պատրաստուեցէք որ երթանք». Եղբայրները պատասխանեցին, «Ո՛չ, քոյրս, մենք քեզ հետ չենք գալու, դու գնա, Աստուած քեզ հետ» և կատարեալ օժիտ պատրաստելու համար, սկսեցին հոգալ։—Դուք գնալու էք, գնացէք, ձեզ յանձնում եմ Աստծուն, Շահ-Իսմայէլին ասաց Գիւլփէրիի մեծ եղբայրը, ձեզ բոլորիդ կատարեալ յաջողութիւն ու երջանկութիւն. բարով հասնէք ձեր քաղաքը. այսպիսի խօսքերով ու բարեմաղթութիւններով հինգ եղբայրները ճանապարհ գցեցին Շահ-Իսմայէլին երեք ընկերների հետ։

Ուրախ, հանգիստ ու զուարճութեամբ գնում էին իրանց ճանապարհը չորս ձիաւոր երիտասարդները, ահա մի օր հասան Ղանդահար քաղաքի մօտ, այնտեղի մի գեղեցիկ ամարանոցում իջևանեցին։ Մի գեղեցիկ այգում, որը շքեղ զարդարուած էր, մէջը մի երկյարկանի շինութիւն կար ութը սենեակից բաղկացած։ Իջան այդտեղ, Շահ-Իսմայէլը ձիերի վրայ բարձած թանգագին ապրանքները ներս բերեց,

տեղաւորեց սենեակներում։ Երեք օրիորդներն էլ մտնելով մի պատրաստած սենեակ՝ հանգստանում էին։ Այդին Շահ-Իսմայէլի հօրն էր՝ Ասլան թագաւորինը, այդեպանը երբ Շահ-Իսմայէլին տեսաւ իւր երեք գեղեցիկ ընկերուհիների հետ, ոտք ու ձեռք իրար խառնուեց, վազեց դիմաւորելու բարձրացաւ պալատ, ներկայացաւ իւր տիրոջը ու եօթն անգամ գետին խոնարհուելով ու ձեռքերը կրծքին բռնած բարովեց իւր տիրոջը։ Շահ Իսմայէլն ասաց—«վազիր քաղաք, ներկայացիր թագաւոր հօրս աչքալուս տուր մեր մասին, ասա որդիդ եկել է, թող կաւք ղրկէ, որ գանք պալատ։ Այդեպանը անյայտացաւ։ Թող սա վազելով գնայ քաղաք թագաւորին աչքի լոյս տայ և առատ ընծայ ստանայ, մենք մնանք Շահ-Իսմայէլի մօտ։ Շահ-Իսմայէլը ոսկեթել բարձերու վրայ թիկնած իւր գեղեցկուհիներին էր նայում, որոնք միմեանց հետ կատակ էին անում։ Արաբն ասում էր Գիւլփէրին—«Գիւլիզարը իւր աննման գեղեցկութեամբ գրաւեց Շահ-Իսմայէլին, ինձ էլ իմ քաջութեանս համար, քեզ որ առաւելութեանդ համար բերեց, դու ինչո՞ւ ես պէտք, ոչ այնքան սիրուն ես, ոչ էլ քաջ»։ Գիւլփէրին ասաց.—«ներողութիւն, օրիորդ, ես մի այնպիսի շնորհք ունիմ, որ ձեզ ոչ մէկի մօտ չկայ. ես գուշակող եմ՝ վիճակ բաց անել գիտեմ, մեր գլխուն ինչ որ գալու լինի, ես կարող եմ իմանալ, թէ չար լինի, թէ բարի. Արաբ-Իւզանկին ասաց, «որ այդպէս է հիմայ մի վիճակ բաց արա տեսնենք»։ Գիւլփէրին վիճակ բաց արեց և ասաց.—«մեր այստեղից ուղղակի թագաւորի պալատ գընալը լաւ չէ, կամ բոլորովին այստեղից չգնանք կամ եթէ գնալու էլ լինինք, ուրիշ տեղ բնակուինք։ Դեռ այս խօսքերը չվերջացրած կառապանը ներս մտաւ, տեսաւ բացի Շահ Իսմայէլից երեք լուսնի կտորներ էլ կային.—«ինչ էք հրամայում, տէր, խոնարհ գլուխ տալով ասաց Շահ-Իսմայէլին. գնամ էլի երկու կառք բերեմ, թէ այս մէկը բաւական է, Շահ-Իսմայէլը հրամայեց, որ շուտով գնայ դարձեալ

երկու կառք բերէ։ «Ասա հօրս, աւելացրեց նա, որ պալատից հեռու մի ուրիշ տեղ պատրաստել տայ, մեր իրերը շատ են, մենք էլ չորս հոգի ենք, չենք ուզում պալատն ելնելով ձեզ էլ, մեզ էլ նեղութիւն պատճառել»։ Կառապանը իսկոյն որդու ցանկութիւնը գնաց իմաց տուեց հօրը պալատում։ Թագաւորը հրամայեց մի ջոկ տեղ պատրաստել Շահ-Իսմայէլի համար և կառքերով ու պալատի շատ ծառաներով գնացին Շահ-Իսմայէլին դիմաւորելու. բերին իջեցրին իրանց համար պատրաստած առանձին տունը։ Ճանապարհորդական փոշոտ շորերը հանելով սրանք նոր գեղեցիկ հանդերձներ հագան, լուացուեցին, մաքրուեցին և մի փոքր էլ ընթրեցին. հետները բերած իրեղէնները դասաւորեցին ու նրանցից թանգագիները սեղանի վրայ դրին, որ թագաւորն ու թագուհին գալիս՝ տեսնեն, ուրախանան։

Երեկոյ էր. արևն արդէն վաղուց մայրն էր մտել. խաղարի թագաւորութիւնը պատրաստւում էր չոքել աշխարհի վրայ. աշնանային զով գիշեր, երկինքը պարզ էր. հօրիզոնի վրայ ոչ մի ամպի կտոր չէր երևում։ Կարծես վերին տեսչութիւնից հրամայուած էր, որ ոչ մի սև գիծ չպիտի լինի երկինքի երեսին. մի ամենահրաշալի պայծառ թագուհի պիտի անց կենայ այդ ճանապարհով։ Ահա հօրիզոնի արևելեան կողմից վարագոյրը պատռուեց. ահարկու սարերու յետեւից դուրս եկաւ գիշերային թագուհի լուսինը. աստղերն էլ դուրս գալով սկսեցին փայլել։ Քաղաքն էլ պակաս չէր իւր շքեղութեամբ երկնքից. պալատից սկսած մինչև յետին աղքատի կտուրի վրայ վառուած էին բազմաթիւ լապտերներ. կարծես իրանց վառվռուն գեղեցկութեամբ երկինք ու երկիրը կուզէին իրար հետ մրցել։ Այս բոլոր հանդիսաւոր ցոյցերը Շահ-Իսմայէլի համար էին պատրաստուած բայց ափսոս, որ չգիտէին թէ շուտով առաւօտ կբացուի, աստղերը կը կորչին, լուսինն էլ կիջնէ, քաղաքի բոլոր լապտերներն էլ կհանգչեն։ Եւ ճիշտ որ կէս գիշերն անցել էր, պայծառ

երկնքի վրայ սկսուել էին կուտակուիլ ամպերը։ Լապտերները մարել էին. ձեռ ու ոտ դադարել։ Պալատի առաջ ու մոտակայ փողոցներում աղաղակ ու ցնծագին ձայներ բարձրացնող խառնուած ժողովուրդը հեռուները քաշուելով փողոցները ամայացել էին։ Լուսինն էլ կարծես երկրի հանդէսի վերջանալը տեսնելով իւր շրջապատող աստղերի հետ մտել էր ամպերի տակ. մի խօսքով տիրել էր խորհրդաւոր լռութիւն։ Այդ միջոցին Թագաւորն ու Թագուհին կառք նստելով ուղևորուեցին դէպի ներքին պալատը, Շահ-Իսմայէլին և հարսնացուներին տեսնելու։ Շահ-Իսմայէլը իմանալով որ իւր ծընողները ՝իրանց տեսութեան են գալիս՝ իսկոյն պատրաստուեց և իւր գեղեցիկների հետ սանդուխտներից վար իջնելով դռանը դիմաւորեցին նրանց։ Շատ սիրալիր հանդիպումից յետոյ, նրանց թևերն ընկնելով, բարձրացրին վերև ու բազմեցրին մարգարտազարդ գահյոկների վրայ. ծառաները ոսկեայ մատուցարանի վրայ դրուած չինական սկահներով արաբից սուրճ մատուցին Թագաւորին և Թագուհուն, Շահ-Իսմայէլին և երեք օրիորդներին։ Թագուհին ուրախութիւնից լաց՝ էր՝ լինում. լաց՝ էր լինում՝ և Շահ-Իսմայէլը որ ծնողների ձեռքերը թողած ոտքերն էր համբուրում։ Թագաւորի ուշադրութիւնը աւելի՝ գրաւել էին իւր հարսնացուները, շարունակ՝ նրանց երեսին էր մտիկ տալիս։ Ո՞վ լինէր՝ չէր նայիլ այդպիսի՝ գեղեցիկներին. մէկը մէկից սիրուն, մէկը մէկից պարկեշտ, մէկը մէկից խելօք։ Երեքն էլ գեղեցիկ յատկութիւններով օժտուած էին. Արաբ-Իւզանկին շատ քաջ էր և անձնազոհ։ Գիւլիէրին շատ հասուն ու խորագէտ էր։ Գիւլիզարը, սրա տունը Աստուած չինէ, մարդ սրա երեսը չէր կարող երկու անգամ մտիկ տալ, անշուշտ նայողի աչքերը կշլանար, այնքան աննման գեղեցկութիւն ունէր։ Մարդ եթէ ոչ ուտէր, ոչ խմէր ու միայն սրա երեսը մտիկ տար, երբէք քաղցածութիւն չէր զգալ։ Գիւլիզարը կարծես դրախտի ծնուած յաւերժահարս լինէր։

Ինչպէս որ սատանան օձի կերպարանքով Եւային խաբեց, այնպէս էլ չար նախանձը ու կիրքը սատանայի հագուստով մտաւ Թագաւորի հոգու մէջ, սկսեց տակ ու վրայ անել։ Թագաւորը մտքի մէջ ասում էր «կամ ես պէտք է ապրիմ կամ Շահ-Իսմայէլը։ Այս աննման գեղեցիկները ես պիտի առնեմ»։ Տեղերից վեր կենալով Թագաւորն ու Թագուհին կիսաբերան մնաս բարով ասելով վերադարձան պալատ։

Հետևեալ օրը Թագաւորը իւր մօտ կանչեց վէզիրին և ասաց—«Շահ-Իսմայէլի գլուխը քեզանից կուզեմ. անպատճառ պէտք է նրան սպանես ու աղջիկները բերես պալատ»։ Վէզիրը սոսկում էր տէրից և կարճ լռութիւնից յետոյ ասաց—«Թագաւորն ապրած կենայ, այդ ինչ ես հրամայում, մարդ իւր միակ որդին կսպանէ, չէ՞ որ այդ օրիորդները քու հարսներդ են, հարսն ինչ, զաւակն ինչ։ Մի անել այդ բանը, Տէր արքայ, մի՛ անել, վերևում Աստուած կայ, քեզ վրայ կբարկանայ։ Ի սէր Ալլահի հեռացիր այդ վատ ճանապարհից դա քեզ կորուստ կտանի»։ Թագաւորը որ չէր սպասում մի այդպիսի ընդդիմադրութիւն, ասաց—«Եթէ իմ կամքը չես կատարում, ես իսկոյն քո գլուխը կտրել կտամ ու դիակդ շներին արժան կանեմ»։ Խեղճ վէզիրը տեսաւ որ ոչ մի կերպ չի կարող համոզել իւր տիրոջը, ասաց նորան. «Արքայ, Շահ-Իսմայէլը հեշտ կերպով ձեռք գալող պտուղ չէ, պէտք է մի կերպով դրա հնարը գտնենք»։ Թագաւորը պատասխանեց.—«այդ թողնում եմ քեզ». վէզիրը շարունակեց «արքայ Տէր, վաղը մի հրաւէր կը սարքես, Շահ-Իսմայէլին էլ կկանչես ու նրա բաժին կերակուրները կթունաւորես, գուցէ դրանով կարողանաս նպատակիդ հասնել»։ Հետևեալ օրը պալատում մի ճոխ խնճոյք սարքուեց. Շահ-Իսմայէլն՝ ի հարկէ հրաւիրուած էր. կանխապէս իմացնելով գաղտնապահ խոհարարապետին, որ Շահ-Իսմայէլի բաժնի մէջ թոյն խառնէ, Թագաւորն ու վէզիրը միամիտ էին, որ այդ փոր-

ձը յաջողութեամբ գլուխ կգայ։ Շահ-Իսմայէլը երբ պատրաստուում էր գնալ, Գիւլփէրին մի վիճակ բաց արեց, տեսաւ որ իր տիրոջ գլխին մի փորձանք կայ գալու, հանելով իւր մատից դեղթափ մատանին տուեց Շահ-Իսմայէլին և ասաց—«Քու բաժին կերակուրները թունաւորուած է, այս մատանին նրանց վրայ պտտացուր, յետոյ կեր և ոչ մի բան չէ լինի քեզ»։ Շահ-Իսմայէլը մատանին գրպանը դնելով գնաց պալատ։ Թագաւորը շատ սիրով ընդունեց և նստելու տեղ ցոյց տուեց իւր որդուն, մի քիչ խօսակցութիւններ և զուարճութիւններ անելուց յետոյ՝ նստեցին սեղան։ Շահ-Իսմայէլը Գիւլփէրիի ասածի համեմատ բոլոր կերակուրների վրայ մատանին պտտեցրեց յետոյ կերաւ, ճաշկերոյթից յետոյ, հօր ձեռքը համբուրելով և շնորհակալութիւն յայտնելով գնաց իւր բնակարանը։

Թագաւորը տեսնելով որ Շահ-Իսմայէլը չը մեռաւ, վէզիրին ատեան կանչելով ասաց.—«քո մտածածդ հնարը ոչ մի յաջող ելք չունեցաւ, տուածդ թոյնը ներգործութիւն չարաւ որդուս վերայ»։ Վէզիրը ասաց—«Թագաւորն ապրած կենայ, Աստուած որ մի մարդու մահն չկամենայ, տկար արարածն ինչ է որ նրան մահացնել կարողանայ»։ Թագաւորն ասաց.—«ես հրամայում եմ որ այդ մարդը աշխարհում կենդանի չմնայ, դրա գոյութիւնը վերջացնելու համար մի ուրիշ հնար մտածիր»։ Վէզիրը այդ ժամանակ մի ուրիշ հնար մտածելով ասաց. «Տէր արքայ, ինչպէս դու, այնպէս էլ Շահ-Իսմայէլը լաւ նարդի խաղալ գիտէ, կանչիր նրան պալատ և խաղացէք. եթէ նա տարաւ, ոչինչ կհամարես. եթէ դու տարար ձեռք ու ոտք կապել կուտաս և նպատակին կը հասնես»։ Զանցած երկու օր Թագաւորը Շահ-Իսմայէլին հրաւիրեց պալատ. Շահ Իսմայէլը անմիջապէս ուղևորուեց հօր մօտ, բայց որովհետև Գիւլփէրին տկար էր այս անգամ չկարողացաւ վիճակ բաց անել։ Երբ Թագաւորը Շահ-Իսմայէլին տեսաւ, սիրով ընդունեց և ասաց—«սիրելիս, այսօր շատ

տխուր եմ, քեզ կանչեցի որ մի քիչ նարդի խաղանք, ուրախանանք։ Շահ-Իսմայէլը երեք անգամ իրար վրայ կրեց հօրը, բայց տեսաւ որ հայրը բարկանալ սկսեց, ուզեցաւ գիտմամբ մի անգամ էլ ինքը տարուել և տարուեց. Թագաւորը հրամայեց, որ որդու ձեռքերը կապեն։ Հրամանը կատարուեց, «քեզ համար որդի, ասում են շատ ուժեղ ես, թէ որ այդպէս է այս կապերը կտրատիր տեսնեմ. Շահ-Իսմայէլը բոլոր ոյժով թևերը ձգձգելով, այն հաստ պարանները, բարակ դերձանի նման կտրտուել սկսեցին։ Թագաւորը զարմացմամբ ասաց.—«որդիս, ապրիս, լաւ ուժեղ ես, ասա այս աշխարհում ապա ինչը կարող է զսպել քու ուժը. «իմ աղեղիս լարերը, արքայ հայր», պատասխանեց նա հրամայեց խսկոյն աղեղի լարերը բերել այդտեղ։ Շահ-Իսմայէլը լարերը առնելով ինքն իրան փաթաթեց մատներին ու սկսեց քաշքշել։ Բայց փոխանակ լարերի՝ նրա մատների ջլերն էին կտրատուում։ Թագաւորը տեսնելով այդ, դիւական ուրախութեամբ հրամայեց այդ լարերով կապկապել նրա ամբողջ մարմինը։ Այդպէս էլ արին։ Եկան դահիճները և տիրոջ հրամանով պատրաստուում էին Շահ-Իսմայէլի գլուխը կտրելու։ «Պարոններ, մի երկու րոպէ ինձ թոյլ տուէք, երկու խօսք ասեմ հօրս յետոյ կտրեցէք, ինչ անենք այսպէս էր կարգադրել Տէրը, բոլորովին հիասթափուած ասաց Շահ-Իսմայէլը, ու իւր արիւնոտ մատները սաղ անելով երգեց այսպէս։

Քեզանից մեծ երկնքումը Աստուած կայ,
Զրկանք է արքայ հայր, մի սպանիլ ինձ,
Կանչէ մօրս այստեղ, թող իմ վրաս լայ,
Զրկանք է, արքայ հայր, մի սպանիլ ինձ։

Քեզի այլայլողը այլոց խօսքեր է,
Չէ որ որդին հօրը երկրորդ պատկերն է,
Մարդու շէնք ու շնորքը երկու աչքերն է,
Զրկանք է, արքայ հայր, մի սպանիլ ինձ։

Զէ որ քու ժառանգդ եմ քեզանից եղած,
Մի լինիր, ծնողս, անգութ, անաստուած.
Այդ բանը չի անել ոչ մի արարած,
Զրկանք է, արքայ հայր, մի սպանիլ ինձ։

Իմ լեզուով ինձ համար գործեցի դարան,
Բռնուեցայ անփորձ թռչունի նման,
Կապկապեցիր, արիր ինձ կիսակենդան,
Զրկանք է, արքայ հայր, մի սպանիլ ինձ։

Մի լինիլ, իմ հայրս, որդուդ չարակամ,
Կզղջաս դու, կհառաչես ամեն ժամ,
Ազատիր ինձ Գիւլիզարս քեզի տամ,
Զրկանք է, արքայ հայր, մի սպանիլ ինձ։

Ցեմ առ հայրիկ, յետ առ այդ խօսքերդ դու,
Մի գործ դնել հրամանդ ահարկու,
Մի կորիր քո տնկած ծառդ պտղատու,
Զրկանք է, արքայ հայր, մի սպանիր ինձ։

Այս երգը բոլորովին ազդեցութիւն չարաւ քարասիրտ թագաւորի վրայ։ Հրամայեց շուտով գլխատել նրան։ Երբ դահիճները Շահ-Իսմայէլին տանում էին գլխատման տեղը, բոլոր ժողովուրդը ոտքի կանգնեց։ Քաղաքի մեծամեծները ժողովուրդի առաջն ընկած եկան թագաւորի ատեան, միաբերան խնդրեցին որ Շահ-Իսմայէլի կեանքը իրանց բաշխէ։ Թագաւորը շատ դիմադրելուց յետոյ վերջապէս ասաց։ «Կեանքը ձեզ եմ տալիս, բայց անպատճառ նրա երկու աչքերը պիտի կուրացնել տամ»։ Շահ-Իսմայէլին տարան որոշեալ տեղը ոճիրը գործելու. սա խնդրեց որ աչքերը հանելուց յետոյ աջ աչքը ձախ գրպանը ձգեն, ձախ աչքը աջ գրպանը. դահիճները Շահ-Իսմայէլի երկու աչքերն էլ բրելով նրա ասածի համեմատ կատարեցին խնդիրը։ Այս բարբարոսու-

թիւնից յետոյ բռնելով նրա ձեռքից գիշերով տարան նրան քաղաքից դուրս մի ամայի և անմարդաբնակ այգում ձգելով դահիճները վերադարձան պալատ։ Թող Շահ-Իսմայէլը այդ տեղ իւր սև աչքը լայ, մենք ընթերցողի հետ գնանք Արաբ-Իւզանկու, Գիւլիզարի և Գիւլիֆերիի մօտ։ Խեղճ աղջիկները տեսնելով որ երկու օր է Շահ-Իսմայէլը պալատ չի վերադառնում, սկսեցին սաստիկ մտատանջուել և կասկածի մէջ ընկնել. Գիւլիֆերին այդ ժամանակ վիճակ բաց արեց և ինչ տեսաւ, իրանց տէրը մի պարտիզում ընկած է և ագռաւները նրա գլխին հաւաքուած, կտցահարելով փորում են նրա աչքերը։ Արաբը սաստիկ բարկանալով ասաց, այժմ ես լաւ հասկացայ գործի էութիւնը։

Թագաւորը տեսնելով որ Շահ-Իսմայէլը մէջ տեղից վերացաւ, հրամայեց որ գնան իսկոյն երեք աղջիկներին էլ բերեն իւր մօտ։ Պալատից երեք ներքինիներ գալով Արաբ-Իւզանկուն յայտնեցին թագաւորի հրամանը. Արաբը պատասխանեց, իմ կողմից թագաւորին շատ բարև կտանէք ու կասէք թէ՝ Արաբ-Իւզանկին ասաւ, մենք էլ մարդ ենք, մեզ համար պատիւ ունինք այսպէս մէն մէնակ չենք կարող գալ, թող մեզ համար հարիւր հատ աղախիններ մեզ առաջնորդելու և հարիւր հատ մշակներ մեր կահ-կարասիները տեղափոխելու ուղարկէ, այն ժամանակ կգանք։ Ներքինիները գնալով պալատ թագաւորին յայտնեցին Արաբի պատուէրը։ Թագաւորը չափազանց ուրախացած հրամայեց շուտով հաւաքել հարիւր աղախիններ ու հարիւր էլ մշակներ ու գնան հարսներին պալատ հրաւիրելու։ Աղախինները ու մշակները եկան բոլորը Արաբ-Իւզանկու դուռը կանգնեցին։ Արաբն էլ աղախիններին ներս հրաւիրելով մշակներին ասաց. «դուք այդտեղ սպասեցէք, մինչև որ ձեր բեռները կպատրաստեմ»։ Արաբը աղախիններին մէկ մէկ ներս կանչելով բոլորի գլուխները կտրեց և մարմինների հետ դնելով ջուալների մէջ, բերանները պինդ կապեց, ինքն էլ դուրս գալով

դռանը մի աթոռի վրայ նստեց ու հրամայեց որ մշակները զգուշութեամբ առնելով ջուալները, կամաց կամաց գնան պալատը, որպէս զի միջին թանկագին ապակեղէնները չը փշրուին։ Մշակների գնալուց յետոյ Արաբ-Իւզանկին մտաւ իւր սենեակը, սև դիմակը դրեց, տղամարդու շորերը հագաւ, զէնքերը կապեց ու եկաւ դարձեալ այն աթոռի վրայ նըստեց։ Մշակները մեծ զգուշութեամբ բեռները տանելով թագաւորի պալատը ցած իջեցրին դիւանատան մէջ տեղը։ Թագաւորը այդ ահագին բեռները տեսնելով չափազանց ուրախացաւ, կարծելով թէ այդ չափը թանկագին գանձեր են։ Նստապեց իւր մօտ կանչել բոլոր մեծամեծներին ու ազնուականներին, սկսեցին մեծ հետաքրքրութեամբ ջուալների բեռանները բաց անել տալ։ Ինչ մեծ զարմանք էր, որ տիրեց թագաւորին ու իւր շրջապատողներին. ամեն մի ջուալի միջից դուրս էր գալիս նրա ուղարկած աղախիններից մէկը գլխատուած և գլուխն էլ հետը դրուած։ Զափազանց բարկացաւ, կատաղեց, գոռաց Ասլան թագաւորը և հրամայեց իսկոյն վաշտ զօրքով գնան կտոր կտոր անեն այդ գործը կատարողներին։ Հրամանը կատարուեց. մի վաշտ զօրք մեծ պատրաստութեամբ առաջ գնաց Արաբի կացարանը և սկսեց պատերազմը։ Արաբը որ սպասում էր այդ բանին, բոլորովին չվախեցաւ, թռաւ իւր նստած տեղից սուրը բացեց, բոլոր ուժը հաւաքելով, այնպիսի մի ահեղ գոռիւն գոչիւնով մտաւ զօրքերի մէջ որ ամենին շփոթեց ու դրանցից մէկը հազիւ կարողացաւ ազատուիլ ու բանի էութիւնը յայտնել թագաւորին։ Թագաւորի կատաղութեանը չափ չկար, մի վաշտ զօրք դարձեալ ուղարկեց յանդուգն թշնամու դէմ, բայց արաբը դրանց էլ խոտի պէս քաղելով վար թափեց։ Քաղաքի առաջաւոր ժողովուրդը և մեծամեծները սաստիկ զայրացած այդ գործի վերայ, մի տեղ ժողով կազմեցին այդ արկածի մասին խորհրդակցելու։ Դրանց միջից մի մարդ տեղից վեր կենալով ասաց. «Մեր թագաւորն ինչու՞ է Աստուծոյ ժողովրդին փորձանքի ենթարկում ու կոտորել տալիս։ Սրան մի ելք գտնելու հնար մտածեցէք։ Մեծամեծներից մէկն ասաց. «սրա ելքն այն է, որ նորից զօրք ուղարկենք։ Ժողովուրդը և թագաւորը այս առաջարկութեանը հաւանութիւն տալով զօրքերի թիւը շատացնելով ուղարկեցին Արաբի վրայ։ Արաբը սրանց էլ յաղթեց ու ցիր ու ցան արաւ։ Վերջապէս չգտնուեց մի մարդ, որ սրան խեղճացնէր։ Թող սրանք դարձեալ պատերազմի հոգս քաշեն, մենք գնանք խղճալի Շահ-Իսմայէլի մօտ։ Շահ-Իսմայէլը աւերակ պարտէզի մէջ ընկած, աչքերը զրկուած տեսողութիւնից, սիրտը տխուր, մի օր սաստիկ յուզուած, ծառերի ճիւղերից մէկը տազ անելով սկսեց երգել։ Այժմ տեսնենք Շահ-Իսմայէլն ինչ է երգում և կարդացող բարեկամները ինչ են լսում Աստուած մարդը տմարդին կարօտ չանէ. ամէն։

Ով երկնային Աստուածաշէն սուրբ Խորան,
Խնդրում եմ աչքերիս մի ճար անես դու,
Երկնքի և երկրի մեծ տէր ու պաշտպան,
Խնդրում եմ աչքերիս մի ճար անես դու։

Մովսէսին ուժ տուիր եղաւ ահարկու,
Մինչև անգամ չունէր նա ճարտար լեզու.
Ով երկնային բժիշկ անմահ կենսատու,
Խնդրում եմ աչքերիս մի ճար անես դու։

Քու կամքով Յովնանը ծովի մէջ մտաւ,
Քու կամքով դլփինը նրան կուլ տուաւ,
Ձկի փորում դարձեալ քեզ չմոռացաւ,
Խնդրում եմ աչքերիս մի ճար անես դու։

Անգութ անխճմտանք հօրից հալածուած,
Անտէր անտիրական այստեղ եմ ընկած,
Տկարներու պաշտպան ստեղծող Աստուած,
Խնդրում եմ աչքերիս մի ճար անես Դու։

Շահ-Իսմայէլն այսօր կանէ աղաղակ,

Դէպի քեզ, ո՛վ երկինք, ազատ համարձակ,
Հասիր օգնութեանս, սրտագէտ Էակ,
Խնդրում եմ աչքերիս մի ճար անես Դու։

Երբ որ Շահ-Իսմայէլը այս ցաւալի երգը վերջացրեց մի զոյգ ոսկէփետուր աղաւնիներ օդի մէջ սաւառնելով գնում էին։ Թռչելով, թռչելով եկան Շահ-Իսմայէլի գլխի վերևում մի ծառի վերայ կանգնեցին։ Շահ-Իսմայէլը լսեց սրանց ճըլվըլոցը, որ կարծես խօսում էին ու ցաւ յայտնում թէ, ճշմարիտ որ շատ ափսոս եղաւ Շահ-Իսմայէլը, խղճալու աչքերը հանելով այստեղ են գցել, ահա մենք մեր փետուրներից երկու հատ կգցենք գետին, եթէ կարողանայ գտնել ու աչքերին քսել, Աստուծոյ կարող զօրութեամբ աչքերն իսկոյն կբացուին։ Բայց ափսոս որ մենք նրա լեզուն չենք հասկանում որ կարողանանք ցաւին մի դարման անել։ Ափսոս, շատ ափսոս Շահ-Իսմայէլին, ասելով թռան գնացին։ Շահ-Իսմայէլը հասկացաւ այդ թռչունների խօսակցութիւնը. աղաւնիներից այս խօսքերը իմանալով՝ ձեռքերը դէս ու դէն ածմծեց, գետնից գտաւ այն երկու փետուրները, գըրպաններից աչքերը հանեց՝ աջը ձախի տեղ, ձախը աջի տեղ դնելով փետուրներն սկսեց նրանց վրայ քսել։ Տեղից վեր կացաւ, մօտեցաւ այգու սառն աղբիւրին և լուացուեց։ Լուացուելուց յետոյ չոքեց և սկսեց սրտանց աղօթք անել։ Ո՜հ հրաշք, Աստուածային ողորմութեամբ խաւարը վերացաւ ու աչքերն սկսեցին տեսնել։ Խեղճ ու մոլոր չորս կողմը նայելով՝ դիմացը մի ծերունի տեսաւ արտ վարելիս։ Ուղղակի գնաց այդ ծերունու մօտ ու բարև տալով ձեռքը համբուրեց. (մինչև նրա հասնելը Շահ-Իսմայէլը պատահեց մի հովուի իւր շորերը փոխեց նրա հետ, մի գառի մորթի էլ գլուխն անցընելով, բոլորովին իւր ձևը փոխեց)։ Արտ վարող գիւղացին էլ բարևն արաւ. Շահ-Իսմայէլն ասաց. «Հայր իմ, խնդրում եմ ինձ քեզ որդեգիր ընդունես». Ծերունին պատասխանեց. «Որդի հիմա այնպիսի ժամանակ ենք հասել

որ հայրը իւր հարազատ որդուց չի կարող օգուտ քաղել, ո՞ւր մնաց թէ օտարից։ Աստուած բարի տայ ու խիղճ տայ մեր թագաւորին, երիտասարդ մարդ չթողեց կոտորել տուեց, իւր միակ որդուն կուրացնելով ուզում էր նրա բերած կայքը առնել, բայց յանկարծ մի արաբ դուրս եկաւ նրանց պաշտպան և սկսեց բոլոր իր դէմ գնացողներին կոտորել։ Ես էլ երեք որդի ունէի որոնք այդ պատերազմի մէջ մեռան։ Բայց որովհետև շատ ես թախանձում, քեզ վերցնում եմ ինձ որդեգիր։ Շահ-Իսմայէլը կատարեալ հովիւ էր դարձել, ցնցոտիների մէջ բոլորովին չէր նմանում որ թագաւորի որդի է։ Աչքերն էլ առողջանալու ժամանակ փոխուել խաժակ էին դառել։ Հինգ-տասն օր ծերունիի հետ գնում էին արտը, արտից տուն, մէկ օր էլ տուն գնալով տեսան որ թագաւորն էլի սուրհանդակ է ուղարկել և նոր մարդիկ է զէնքի կանչում։ Այս բանը Շահ-Իսմայէլը տեսնելով ծերունուն շատ խնդրեց, որ իրան զինուոր գրել տայ։ Ծերունին շատ դիմադրեց, յետոյ տեսաւ որ չի լինի, Շահ-Իսմայէլի համար մի ձի, մի ձեռք զէնք գնեց, մի քանի դահեկան էլ փող նուիրելով խառնեց զօրքի մէջ։

Զօրքը գնալով, գնալով հասաւ մի բլուրի մօտ վրան խփեց։ Յանկարծ Շահ-Իսմայէլն ինչ տեսաւ, Արաբ-Իւզանկին, մի սև ձիու վրայ նստած, ահագին լախտը ձեռքին, փրփրած առիւծի նման, աջ ու ձախ կոտորում է թշնամուն։ Այս բանը տեսնելով դողաց, տեղից վեր կենալով իսկոյն գնաց զօրապետի մօտ և ասաց. «Տէր իմ, խնդրում եմ ինձ թոյլ տաս Արաբ-Իւզանկու հետ մենակ կռուելու։ Զօրապետը ծիծաղելով պատասխանեց. «Կորիր այստեղից, քաչալ լակոտ, այնքան կտրիչ տղամարդիկ չկարողացան յաղթել, դու ես ուզում հիմայ նրա դէմ մենակ դուրս գալով յաղթել։ Զօրապետը Շահ-Իսմայէլի անչափ խնդիրները յարգելով, թոյլ տուեց մենակ Արաբի դէմ կռուելու։ Ձին հեծաւ, սուրը աջ ձեռքը բռնելով, վահանը ձախ, վազեց արաբի

տան առաջ, այնպէս մի գոռիւն գոչիւն հանեց ու աղաղակ բարձրացրեց, որ Արաբի վրայ մի անսպասելի սարսափ թոզեց։ Արաբ-Իւզանկին դառնալով Գիւլիէրիին և Գիւլիզարին ասաց. «աղջիկներ, ես այսպիսի մի ձայն Շահ-Իսմայէլից լսեցի առաջին անգամ, երբ իմ դէմ ելնելով յաղթեց։ Ահա երկրորդ անգամն է, որ նոյն ձայնը լսում եմ. վախենում եմ թէ յաղթուիմ այս տղամարդուց»։ Այս խօսքերն աւարտելուց յետոյ, անմիջապէս ձին նստելով դուրս թռաւ և մտաւ կռուի ասպարէզը։ Առաւօտից մինչև երեկոյ կռուեցին, բայց ոչ մէկը միւսին չկարողացաւ յաղթել։ Շահ-Իսմայէլը, ի հարկէ Արաբին ճանաչելով, չէր ուզում նրան յաղթել միևնոյն ժամանակ զգուշ էր մնում նրանից մի վնաս ստանալուց։ Արաբը, որ չէր ճանաչում թէ ում հետ էր կռւում, ամեն կերպ աշխատում էր յաղթել այդ յանդուգն հովիւ-տղային։ Շահ-Իսմայէլը հաստատ տղամարդու պէս էր կատարում իւր դերը։ Վերջապէս՝ երբ մութն ընկաւ, կռիւը դադար առաւ, Շահ-Իսմայէլը դարձաւ իւր վրանը, իսկ Արաբը քաշուեց իւր բնակարանը։ Թագաւորը լսելով մի անծանօթ հովուի քաջագործութիւնը Արաբի դէմ, հրամայեց որ շուտով իրան ներկայացնեն այդ կորիչ տղամարդին։ Շահ-Իսմայէլը ներկայացաւ Թագաւորին, երբ որ արքայի առաջն եկաւ, եօթն անգամ գետին խոնարհուելով ձեռքերը կուրծքին դրած կանգնեց։ Իսկ Թագաւորը նրան գովելով ասաց. «ապրիս որդիս, ապրիս, լսեցի շատ լաւ ես կռուել այդ արիւնարբու արաբի հետ»։ Շահ-Իսմայէլը պատասխանեց. «Թագաւորն ապրած կենայ, կռուեցի բայց իմ ոչ ձին է պատերազմի յարմար և ոչ զէնքերը։ Թագաւորն ասաց. «գնա ձիանոց որ ձին որ կհաւնիս, վեր առ և զինարանը որ զէնքերը կուզես վերցրու քեզ։ Շահ-Իսմայէլը մտնելով հանդերձատունը մի ձեռք գեղեցիկ հանդերձ հագաւ, յետոյ գնաց զինարանը և իւր իսկական զէնքերը պատից վայր առնելով պատրաստուեց, այդտեղից դուրս գալով մտաւ ախոռատունը.

Շահ-Իսմայէլի ոտնաձայնը լսելով նրա ձին Ղամարը, կարծես հասկացաւ օտարականի ով լինելը, խրխնջաց, ուրախացաւ խելացի կենդանին ճանաչեց իւր տիրոջը, որ կորցրել էր նրան։ Շահ-Իսմայէլը արտասուելով ընդունեց իւր սիրելի ձին, շոյեց նրա բաշը, իւր ձեռքով թամքեց և դուրս քաշելով թռաւ նստեց վրան։ Ախոռապետը և ներկայ եղողները շտապելով թագաւորի մօտ՝ ասացին. «Արքա՛ տէր, այն կորիչ երիտասարդը Շահ-Իսմայէլի շորերին, զէնքերին և ձիուն հաւանեց»։ Թագաւորը պատասխանեց. «Ի հարկէ կորիչ մարդը կորիչի էլ զէնքերին ու ձիուն կհաւանի»։ Բայց ներկայ եղողները կասկածանքով խօսում էին թէ՝ այս մարդը Շահ-Իսմայէլը կլինի։ Շատերն էլ ասում էին չի կարող այդպիսի բան լինել, նրան կուրացրին, մէկ էլ որ նրա աչքերը սև էին և շիտակ իսկ սրանը խայտեաշ են և մի քիչ էլ շիլ։ Շահ-Իսմայէլը զօրապետից խնդրեց, որ իրա համար մի առանձին վրան խփել տայ արաբի տան մօտ, որպէս զի երեկուայ կռուից վախենալով գիշերը չկարողանայ փախչել։ Այդպէս էլ արին։ Կէս գիշերին արաբը տանից դուրս ելաւ՝ տեսնելու տան դրութիւնը։ Տեսաւ որ իրա դռան առաջ մի վրան է խփած, վրանի դռանն էլ մի տղամարդ է մտն գալիս, վազեց արաբը սենեակից իւր փոքրիկ արծաթապատ սազը բերեց, տեսնենք ինչ է երգում իւր ախոյեանին և նա ինչ է պատասխանում։

ԱՐԱԲԸ.

Շուտով կլինիս խայտառակ,
Անմիտ գոռոզ անպարտաւան,
Առանց ձայնի գիշեր ժամանակ,
Դուրս ես պրծել գողի նման։

ՇԱՀ-ԻՍՄԱՅԷԼԸ

Հաւատացիր, ես գոռոզ չեմ,
Եկել եմ քեզի տեսութեան,

Ինձ մի կարծիր դու անխոհեմ,
Ոչ էլ անմիտ ինքնահաւան։

ԱՐԱԲ.

Ինչքան կտրիչ երիտասարդ,
Ինձանից կրել են մեծ ջարդ,
Իմ սրից բիւր հազար մարդ,
Իջել են սառը գերեզման։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼ.

Մօտ արի երեսդ տեսնեմ,
Սրտիս սէրը քեզի յանձնեմ,
Գոռալով ասպարէզ մտնեմ,
Ինչպէս առիւծ, ցոյց տամ նշան։

ԱՐԱԲ.

Լսիր կտրիչ, լսիր ինձի,
Փախիր, խնայում եմ քեզի,
Մեռցրել եմ անթիւ հոգի,
Տես անհամար դիակներ կան։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼ.

Դու ինձ երկիւղ չես կարող տալ,
Ամեն քամուց ես չեմ դողալ,
Կը մեռնեմ յետ չեմ գնալ,
Սրտիս մէջ արել եմ պայման։

ԱՐԱԲ.

Կռուի դաշտում դուանընտել,
Թռչունի պէս ճանկս եսընկել,
Իմ անունս չէիր լսել,
Դողացրի ողջ Հնդկաստան։

ՇԱՀ-ԻՍՄԱՑԷԼ.

Պատերազմին տալով դադար,
Ընկերներիդ բարի լուր տար,
Հազար ափսոս ինձի համար,
Ուշ գտայ աչքիս դարման։

Արաբ-Իւզանկին այս խօսքերից իսկոյն հասկացաւ, որ իւր զօրեղ հակառակորդը իւր սիրելի Շահ-Իսմայէլն է, մի բարձր ձայն արձակելով ասաց—«աղջիկներ դուրս արէք, որ մեր տէրն եկել է»։ Գիւլփէրին և Գիւլիզարը այդ անսպասելի լուրն առնելով շնչասպառ դուրս ընկան։ Շահ-Իսմայէլի թեւերն ընկնելով, ուրախ ուրախ վեր բարձրացրին իրանց սենեակը։ Երկար ժամանակ փաթաթուելով պարանոցով չէին ուզում բաժանուիլ։ Այդ բանը երազ էր թւում նրանց։ Մի քիչ հանգստանալուց յետոյ Արաբ-Իւզանկին ասաց.—«Տէր իմ, այժմ երկար խօսելու ժամանակ չէ, վեր կաց շուտով գնա, թող ոչ ոք չիմանայ քո այստեղ գալդ, գիտեմ որ թագաւոր հայրդ վաղը քեզ կը կանչէ ու կասէ, քեզ ամեն բանով կբաւականացնեմ, եթէ այդ Արաբին սպանես»։ Դու էլ համաձայնութիւն կուտաս։ Կը գաս մի լախտ խփելով ինձ ձիուց վար կձգես ու չոքելով, իբր կուզես ինձ սպանել. բայց այդ ժամանակ կը կանչես հօրդ և կասես. «Ահա քու թշնամին, Արքայ հայր, արի քու ձեռքովդ գլուխը կտրիր»։ Հէնց որ նա ինձ մօտ կգայ դու հեռացիր, ես վեր կենալով նրան իմ սրով ուղիղ երկու կէս կանեմ։ Այսպիսի պայման կապեցին, յետոյ բաժանուեցին միմեանցից։

Առաւօտ էր, արշալոյսը բացուելով, արեգակն սկսեց իւր պայծառ լոյսը հաւասարապէս բաժանել աշխարհի վերայ։ Ամեն մարդ քնից զարթնելով սկսել էր Աստծուն փառաբանել և իւր գործին գնալ։ Գեղեցիկ թռչունները ձագերի հետ բուներից դուրս գալով, օդի մէջ սաւառնելով, սկսեցին իրանց ներդաշնակ երգեցողութիւնը։ Այդ ժամանակ թագաւորը տեղից վեր կենալով, առաւօտեան տան շորերով, մարդ ուղարկեց Շահ-Իսմայէլին կանչեց իւր մօտ։ Ուզելով շուտ կատարել իւր վատ ցանկութիւնները, կանչել տուեց Շահ-Իսմայէլին և ասաց.—«որդիս, այսօր կաշխատես անպատճառ յաղթել այդ անզգամ Արաբին. մի խօսքով, նրա գլուխը այսօր քեզանից կուզեմ։ Շահ-Իսմայէլը պատասխանեց. «շատ լաւ կլինի, Տէր իմ»։ Այդտեղից թագաւորի և մեծամեծների հետ եկաւ կռուի ասպարէզը. երբ որ Շահ Իսմայէլը իւր գեղեցիկ շորերով Ղամար ձիու վրայ նստած վազեց դէպի Ա-

բաբը, բոլոր ժողովուրդը և մեծամեծները, բացի թագաւորից, սկսեցին իրար ականջից փսփսալ. սա անպատճառ Շահ-Իսմայէլն է։ Սկսուեց պատերազմը, թագաւորը հեռուում նստած իւր վէզիրի և մեծամեծների հետ մտիկ էր տալիս այս հետաքրքիր հանդիսին։ Շահ-Իսմայէլը իւր ծանր լախտը մէկ այս կողմ, մէկ այն կողմ շարժելով, մի այնպիսի հարուած հասցրեց Արաբին, որ նրան ձիուց գլորեց ցած։ Ինքն էլ շտապով ձիուց թռչելով՝ չոքեց Արաբի կրծքին. թագաւորը Արաբի դեռին գլորուելը տեսնելով, ուրախութիւնից սկսեց ծափ զարկել ու բացագանչութիւններ անել «կեցցէ կարիչս, կեցցէ քաջ ասպետս»։ Շահ-Իսմայէլն, ինչպէս պայման էին արել, թագաւորին հրաւիրելով ասաց. «Տէր իմ, եկ քու ձեռքովդ թշնամուդ գլուխը կտրիր. թագաւորը չափազանց ուրախութիւնից խելքը կորցրածի նման, սուրը պատեանից հանեց և վազեց դէպի Արաբը։ Երբ գազանի պէս յարձակուեց դէպի դեռին տարածուած Արաբը, Շահ-Իսմայէլը մի կողմ քաշուեց. Արաբը առիւծի նման կատաղած մռնչաց, վեր թռաւ ուիւր երկու հարիւր լտրանոց լախտով այնպիսի մի հարուած հասցրեց նրա գլխին, որ բժժեց ու պտոյտ գալով փռուեց դեռին։ Անմիջապէս հանելով սուրը մէջքից ուղիղ երկու կէս արաւ լիրը ու անբարտաւան մարդուն։ Ասլան թագաւորն իւր դիւական հոգին աւանդեց։ Այդ նշանաւոր դէպքից, ներկայ եղող ժողովուրդն ու պալատականները, որոնք արդէն հասկացել էին քաջի ով լինելը, կեցցէներով ու ցնծագին աղաղակներով յայտնեցին իրանց շնորհակալութիւնը։ Ամբողջ Ղանդահարը դաղուել էր Ասլան թագաւորի ձեռքից ու խորովուել նրա գործերից։ Ազատուած այդ ամենից, «կեցցէ Շահ-Իսմայէլ, կեցցէ մեր նոր թագաւորը» գոռալով ու բղաւելով, ձեռքերի վերայ բարձրացրած տարան հօր գահի վերայ բազմեցրին։ Շահ Իսմայէլը չթողեց որ հայրը նախատինքների արժանանայ, ինչքան որ չլինի, հայրն է, արժանաւոր կերպով թաղել տուեց նրան իւր պապերի շիրիմների կողքին։ Մի քանի օր սուգ պահելուց յետոյ սկսեց հարսանեաց պատրաստութիւնը, քառասուն օր և քառասուն գիշեր հարսանիք անելուց յետոյ, հասան իրանց մուրազին և ապրեցին մինչև խորին ծերութիւն.

-800-

ՀՀ Ազգային գրադարան
NL1656377

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻԶՈՒՄ

Վաճառում են ԱՇԼԻԳ-ՋԻՐԱՆԻ հետևեալ աշխատութիւնները

ՔԵԱՐԱՄԻ և ԱԱԼԻԻ ՀԵՔԵԱԹԸ հանդերձ երգերով. երրորդ տպագրութիւն. Թիֆլիս. 1901 թ. գինն է 60 կոպ.

ԱՇԼՂ-ՂԱՐԻԲԻ ՀԵՔԵԱԹԸ հանդերձ երգերով. 6-րդ տպագրութիւն. Թիֆլիս 1901 թ. գինն է 40 կոպ.

ՇԱՀ-ԻՍՄԱՅԼԻ ՀԵՔԵԱԹԸ հանդերձ երգերով. երկրորդ տպագրութիւն. Թիֆլիս 1901 թ. գինն է 30 կոպ.

ՄԵԼԻՔ-ՇԱՀԻ ՀԵՔԵԱԹԸ հանդերձ երգերով. Թիֆլիս 1898 թ. գինն է 25 կոպ.

Գումարով գնողներին զեղչումն կը լինի:



18006
II